Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

15637

1859

Դ-39

N41

# ՄԻՋԻ ՄԱՐԴ

ԿԱՄ

ՄՈՑԻՔՈՒԼ

## ԿՕՄԵԴԻԱ–ՎՕԴԵՎԻԼ

ՅՕՐԻՆԵՑ

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ

**1859**

ԹԻՖԼԻՍ

40к

891.99
Պ-29

# ՄԻՋԻ ՄԱՐԴ

ԿԱՄ

ՄՈՅԻՔՈՒԼ՝

## ԿՈՄԵԴԻԱ-ՎՈԴԵՎԻԼ։

ՅՕՐԻՆԵՑ

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ։

1859

ԹԻՖԼԻԶ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

ԳԱԲՐԻԷԼԻ ՄԷԼ-ՔՈՒՄԵԱՆՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/VI-1922

3435

# ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԵԼՔՈՅ · · · Հաւլաբրեցի արհեստաւոր.
ՆԱՏՈՅ · · · Նրա կինը.
ԿԷԿԷԼ · · · Նրանց դուստրը.
ՍԻՄՕՆ · · · Նրանց ծառան.
ՇՈՒՇԱՆ · · · Նրանց աղախինը.
ԳԱԲՈՅ · · · քուեր որդի Նատոյի.
ԵՕՎԱՆԷ · · · մէջի մարդ
ՍԱՐԳԻՍ · · · ընկեր մէջի մարդի.
ՓԵՓՈՅ, ՔԲԵԹՈՅ } · · · Մելքոյի հարեւան աղջկերք.
ԿԱՌՆԵՎԱՍԿԻ · · · ջահիլ պրապորշչիկ.
շաֆեր (խաչեղբայր), ժամկոչ, հարեւան կանայք, հիւրեր.

Գործողութիւնը կատարւում է Թիֆլիզում:

---

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ**

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 4-го Сентября 1859 года.

*Ценсоръ И. Кайтмазовъ.*

Թիֆլիզոյ հայ երիտասարդ ուսանողքը կամելով սարքել իրանց համար աղնիւ զբօսանք և միասին ընծայել Թիֆլիզաբնակ հայերին զուարճութիւն, այս տարուայ Յուլիսի 26 ին ներկայացրին Թիֆլիզումը հայոց լեզուաւ առաջին Թատրոն (անային) որի խաղարկութիւնն էր «Մեղու հայաստանի» լրագրումը տպած խօսակցութիւնը Բարբարէի և Պետրոսի իրանց աղջկան հայերէն ուսումն տալու համար ։

Այցելուքը, ըստ մեծի մասին հայազգի Թիֆլիզաբնակ պատուելի անձինք և Տիկնայք, մինչև երեք հարիւր հոգիք, էնքան մեծ հրճուանքով և ախորժանքով ընդունեցին էն խաղարկութիւնը իբրև նոր ապացոյց ազգային յառաջադիմութեան, մինչև որ խաղարկութիւնը վերջանալուց յետոյ շատ երևելի անձինք խնդրեցին երիտասարդներից, որ աշխատեն օրըստօրէ բարելաւացնել և կատարելագործել խաղարկութիւնը ։ Էսպիսի քաղցր ընդունելութիւնը էնքան խրախոյս տուեց երիտասարդներին, որ նրանք յանձն առին իրանց համար Թանկագին ժամանակի մէկ մասը նուիրել էս առարկային և տարէնը մէկ քանի անգամ ներկայացնել Թիֆլիզումը առանձին Թատրոն ։

Միւս օրը բոլոր Թիֆլիզոյ հայերը խօսումէին էս առարկայի վրա և շատերը ցաւելով ասումէին, Թէ ափսոս, որ հայոց լեզուաւ էնպիսի աշխարհաբառ շարադրութիւններ չունինք, որի նիւթը առած լինի մեր առանձին կեանքից ։ Էս գանկատը լսելով ես իսկոյն գնացի տուն, նըստեցայ և երկու օրումը գրեցի էս կօմեդիա—վօդևիլը, կանչեցի ուսանող երիտասարդներին, կարդացի նրանց մօտ, երիտասարդները իսկոյն բաժանեցին իրանց միջումը գործքերը (ռօլերը) և Օգոստոսի 10 ին ներկայացրին ։ Այցելուքը շատ մեծ հրճուանքով ընդունեցին և էնքան ցոյց տուին իրանց բաւականութիւնը, մինչև որ համոզեցին երիտասարդներին երկրորդ անգամ էլ ներկայացնել. և ուսանողքը զոհելով իրանց ժամանակը, կատարեցին հասարակութեան ցանկութիւնը, և ներկայացրին այս կօմեդիան երկրորդ անգամ ։

Ահա, էսպէս սկսուեցաւ Թիֆլիզումը հայոց առանձին Թատրոնը և էս պատճառաւ գրեցի ես էս փոքրիկ գրքուկս ։

Եթէ չըհամարձակուիմ ասել, Թէ ո՞ր կարգումը պէտք է դասուի սա իրա տեսակների մէջ, գոնէ կարող եմ համարձակ ասել, Թէ իրա նիւթովը և լեզուովը առաջինն է մեր ազգի միջումը ։ Բայց որովհետև գրուեցաւ շատ կարճ ժամանակումը, վասն որոյ ունի և զանազան պակասութիւններ, որոնց համար խնդրումեմ բարեմիտ ընթերցողներից ներողամիտ լինել ։

Թիֆլիզեցւոց արտաբերութիւնը ունի մէկ քանի յատկութիւններ, որ դժուար է գրով յայտնել. Ես սակայն հարկաւոր եմ համարում էս տեղ դնել մէկ քանի կանոններ էս գրքումը գրածները ուղիղ Թիֆլիզեցւոց պէս արտասանելոյ համար, զօրօրինակ.

| Գրած է. | Կարդա. | |
|---|---|---|
| Իս . . . . . | ըս . | կուլցնելով ը տառի հնչիւնը |
| Իփ . . . . . | ըփ. | |
| Կուզա . . . . | գուքայ. | արտաբերելով գ տառը կարծր հնչմամբ. |
| Կուզիմ . . . . | գուզիմ . | |
| Ղարալ . . . | | արտաբերելով ղ տառը վրաց Ց հնչման պէս. |
| Ղասա . . . | | |
| Մեծրել . . . . | մեծրել. | |

փոխանակ ասելոյ՝ Ասում են՝

| | |
|---|---|
| Որ . . . . . | վուր. |
| Որդի . . . | վուրթի. |
| Ուր, որ տեղ. | վուրդի. |

Եթէ իմ սիրելի հայերը կընդունեն էս իմ աշխատութիւնը եւ կարդալով կամ տեսնելով Թատրոնական բեմի վրա կըզուարճանան, ես կը համարեմ իմ անձը բախտաւոր, որ կարողացայ տալ իմ ազգին մին քանի ժամ ուրախութեան:

Մ. Պատկանեանց:

# ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ·

## ՏԵՍԱՐԱՆ Ա·

*Թատրոնի բեմը ներկայացնում է թախտով սենեակ. պատի վրայ հայելի. սենեակի մէջ քանի մի աթոռ և մէկ սեղան. թախտի վրայ մութաքայ։*

ՆԱՏՈՅ, ՄԵԼՔՈՅ· *յետոյ* ԿԵԿԷԼ, *վերջապէս* ԵՕՎԱՆԷ·

ՆԱՏՈՅ·

(*Թախտի վրա թէք ընկած մութաքին, ակրաքրմէն ցըցելով*): Քող պէս էլ անգամ մարդ իմ աչքը չէ աեհնի . . . գինամյա . աղջիկս նկել է հասել է, դուն խեկի այնումը էլ չես զը- ցում: Ախար մէ բան փիքր արա, օջախին տէր, խօսէ, քըթամ տու . . . էանց խոմ չի՞ ընի . . . ինչկի ինք պինիմ աղջկա նըս- անցնի . . .

ՄԵԼՔՈՅ·

(*Սենեակի մէջ մանգալով ակրաքրմէն ձեռին*)· Ա՛խկիկ, քանի՞ խօսիս, ինչ էլաւ քի . . . մէ պատի մուլթի չես տայ, վուր աչք բաց անիմ . . . ինչ ես շտապում . . . ջեր խոմ Կեկելը պատու- հինգ տարեկան էլ չէյ . . : իմ բիձու աղջկերանց պէս խոմ չէ՞ քացխի . . . ջեր էրեխայ է . . .

ՆԱՏՈՅ·

(*Տաքնալով*): Բաս դուն հուզես վուր ես էլ պառաւեցնիմ իմ աղջիկա՞ն . . . չէ՞ դեթարդվա . . . թէ դուն գլուխ չես դնի, ես ինքս մօցիքքլի կու ճարիմ: . . . Ա՛յ, հարէն, անցկացած շաբաթին մօցիքուլ Եօվանէն Մաթոյի աղջկան էրկու օրումը հաւ նըշ- նից, հաւ պսակից: Հէ տեր բաշարաչի ազայ է, վուր մէ օրու- մը մալանաթ կանէ, կու ներէմիբմի, թէ վուր քըթամը թէժ ընի:

ՄՆԼՔՈՑ.

(Հանդարտ)։ Դո՛ւն գիտիս... վունց որ կուզիս, ճարէ... մադ-րամ իս գիտիմ, վո՛ւր միր խարջ լաւ հառւ տղայ չիս կանայ ճարի։ Իս ժուկվան միր հառւ տղերքը հէստի կունձիք ին ա-ռաջ դցում, վուր մարդ զարհուրում է... դիփ հազար, հա-զար թումնըրի անուննիր ին տալի։ Գնըթացվա, իս վո՛ւրղանց ճարիմ... Հալա փառք Աստծու վուր մէ աղջիկն աւել չու-նիմ... վունց վուր ընի դէսից դէնից մուռ կոնիմ։ Բաս էն խիղճ հէրն ու մէրը ինչ վայ տան իրանց գլուխը, իր վուր իրէք իրէք, չուրս չուրս ադայլի աղջկերքը առջէնիրը շարած ին...

ՆԱՏՈՑ.

Բաս դուն կուզէիր վուր տղերքը անխուղ տանէին... ընչի՞ կո-սէ... դանա հիմի կնիկ պահիլը հիշտ բանէ՞... դանա ամէն կը-նիկ ինձ պէս զարուլ կոնէ մէ դերիով, ու մէ զաղփով եօլա գը-նայ...

ՄՆԼՔՈՑ.

(Մէկ կողմը խօսելով) Է՛... էլի կըլէ իրա դաւլէքը...

ՆԱՏՈՑ.

(Շարունակելով) Ջի՞ս աւհնում հիմիկվայ կնիկերքը ինչ թահար ին դուրս գալի՞... նրանց ինչը կու գիմնայ...

ՄՆԼՔՈՑ.

(Տաքնալով) Բաս միր ժուկվան տղերքը տղէք չէին, վուր քիչ փուղով կին առնում... դանա նրանց կնիկերքը պակաս ապրիլ կենդնութին ունէի՞ն... ո՞վ էր լաւ միր փախսօքը 5, 6 հարուր թումման բաժինք... մէնակ Բէհբուդէնց տուն կէ-հար հազար թումման... Հիմի էն էն էն յետին դրագիրն էլ, կուպցի աշկիրտն էլ հարուր թումնըրի անուն ին տալի ...մէ հարցնող ընի թէ, իրանք վո՞ւր միքի ու ճուրտի տէ-րիր ին... Ջէ՛, կօսէ... իս չինովնիկ իմ, ջամագիր ունիմ... իս կուպից իմ, առուտրի միջումն իմ... Անինիկ պառւում ին ու քիչ փուղով աղջիկ չին առնում։

ՆԱՏՈՑ.

(Տաքնալով) Իս ու իմ հոգին, վուր չինովնիկը զուրդ է առում... բաս չին ճարիլը հիշտ բանէ՞... բաս չինովնիկը վուր

կունձի կունձի ջամադիրը տուն է բերում, էն փող չէ՞... Հայրաթ վուր ամէն չինովնիկ էլ իր կնի ու ջամագրի լայիղ տուն կուզէ պահի... Մադրամ չինովնիկների կնիկէքը էնէնց են անում, վուր իրանց մարդկերանց ջամադիրը քիչութեն է անում... Նրանք էլ միղ չունին... ունհնում են, վուր իրանց վրա ցածրիրը անում են, նրանք էլ են անում... էսսուամէն է դուս գալի, վուր չինովնիկների ջամադիրը ձլեւ իրանց տունն է պահում... խմում վո՞րղանց հայցնեն իրանց կնիկերանց զրգսիրը... Ի՞նչ ջամադիր կուդիմանայ հիմիկուայ աղչկերանց զրգսերուն... Նրանց ճակտի թահրթահր ազլունիրը, նրանց գլխի կասինկէքը, նրանց շուբէքը, սալօփնիրը, բուռնուսնիրը, կլօկնիրը... նրանց գլասէքը, գամէքը, անուխկ մուէքը ...նրանց դոշի ու ճակտի քորոցնիրը, օղերը, բրասլետնիրը ու փորմուլարնիրը... նրանց կընկաւուր պօլասպաժ կէքը... տուն կու քանդեն, ինչ խօ ասում... Էս մօտէրքումն էլ ինչ վուր նուր մօդայ են բերի... կրի, կեր, կրի, կեր, կէրօն է, ինչ է, անունն էլ լաւ չիմ գիտի... մուլափ, Կէկէլը գիտէ... էն օրն էլ ասում էր...... (ձէն է տալի) Կէկէլ...... (Կէկէլը տուն է գալի ժպտալով և կանգնում է մօր մօտ. Նատօն շարունակում է) էն ինչ են հաքնում մօդնի աղջկերքը դերիի տակէմէն... էն վուր մաթօյի աղջկայ համա էլ հարմարութեն առեն...

ԿԷԿԷԼ.

(ժպտալով) Կրինօլի՞ն...

ՆԱՏՈՅ.

Հա՜... կինօլին, կինօլին...

ԿԷԿԷԼ.

Կինօլին չէ, դէդի... կրինօլին, կրինօլին... ինչ կուլի ինձ համա էլ առնիք...

ՄԵԼՔՈՅ.

(Տաքանալով) Ի՞նչ կանիս... միք ինչ սաղ կուգայ էդթասուր բանիրը... խօ մէ փէշաքար մարդ իմ... իմ հաքարը ինչ կօսէ, իրր դուն էտէնց բանիր հաքնիս... Ա՛ն ինչ մէ հար-

կտուր բաց է· գիշերը փռւում է հէնց գլխներս նուրի նաղ-
քան ընի···Մութափ տու մէ դափ սախ էտու վրա···Էրէկ
իրիկուն էս ու խարին Պետրոսը գնում էինք բաղչայքն համ-
բարբելու···Բէհբուդէնց քուչումը մեր առջևը երկու աղջ-
կերք էին գնում···օխտածների գիշերը սաղ քուչէն բանիլ
էր···մինք ուղեցանք անց կենալ···դէսը մոտիկ տուինք, դէնը
մոտիկ տուինք, տեղ չկայ···չարչն կտրուած սկսեցինք էդ-
նեմէն գնալ··· իր վրէր սկսեցին սանդղաներու վրա դլվէր
գնալ, խեղճ Պետրոսը մէ բաշ գլվէր մոտիկ էրխա ու կցեց
ծիծաղել···հարցնում իմ թէ ինչ խաբար է···էլ վուչինչ
չկանաց ասիլ էր, մառալ շանց էրխա···աչքերս գլվէր գցիմ
ու տեհնիմ···քամին փափանցնում է աղջկերանց փիշէքը··
ու ինչքի ծնկնիրը գլխի էրևում է···ամօթու էլ չկանա-
ցինք թէ գլվէր էինք գնացի···հեդ դառանք···Չիմա համեչէք
···իմ պարուն աղջիկն էլ ուզում է գնուլին հաքնի··

ԿԵԿԵԼ·

(ծիծաղելով) Գլնուլին չէ՞···կրինօլին, կրինօլին·

ՄԵԼՔՈՑ·

Կրինօլին է, թէ մինօլին, ես չեմ գիտի, մեր բանը չէ···

ՆԱՏՈՑ··

Ընչի՞ կօսէ···ութը մանէթը գլխեմէդ կտրուիլ է՞···ընչի՞
արա դուրդարօսփի աղջկերքը ունին··նրանց լայիղ է ու իմ
աղջկան լայիղ չէ՞···էգուցէմէտ կեհամ կու առնիմ:

ՄԵԼՔՈՑ·

Իս կամք չեմ տալի վուր առնիս···

ԿԵԿԵԼ·

(Լաց ընելով) Գեվորգնանքը ունին, մենակ իս պիտիմ խալխի
մէջումը մնամ դաց փիշերքումս կոլոված:··

ՄԵԼՔՈՑ·

Ա՛ նիրի, տես ինչքան տուտուց իս···արա ո՞ւր էիր գցում
էրեխի բերանը··

ՆԱՏՈՅ·

Լաւ է, լաւ է, կեկել ջան, դուն արխային կացի, ես կու-առնիմ քի համա···դուն հիմի գնա քու կարը կարէ:

ԿԵԿԵԼ·

(Ուրախ թռչոտելով դուրս է վազում ծափ տալով) Կրինօլին կու հաքնիմ···կրինօլին կու հաքնիմ···Քէթոն ջկրու կու տրաքի···

ՆԱՏՈՅ·

(Մտածելով Մելքոյին և կանչելով նրա մօտ) Դուն թէ լաւը կուզես, գիտե՞ս ինչ պիտիս անի···դուն գնա մեր տերտէրի մօտ, խորուրդ արա, նա լաւ լաւ տղէրք կու ճանչնայ···իրան էլ մէ բան խօսացի· խաչը գիտենայ կու ճարէ···

ՄԵԼՔՈՅ·

(Հանդարտ և փերփենալով) Ես էրէկ էլ նրա տանն էի··· շատ ծանր ու թեթև արինք, մեր լայիղ օջմին չը ճարեցինք···Կալատող Անդրինի տղի համա խօսեցանք՝ նա ջեր մնում է մինծ աղբուրը· մինծ աղերն էլ փոթրատ է վէկալի· ջեր երեք տարի գլուխը խառը կու լի: Խարազ Առաքելի տղէն քուերտիք ունէ, տանը· նրան վո՞նց կու լի փող տալ···տանէ իր քուերտերանց համա բաժինք չինէ՞, ու Կեկելը մնայ դառ ու դարդա՞կ···Մում ածող Պողոսի տղէն շատ փող է ուզում··· փուանտ է դառի···

ՆԱՏՈՅ·

Էդ ի՞նչեր ես խօսում···Ես էլ անկաջնիրս սրիլ իմ ու մնում իմ, թէ բան կօսէ···էդ ի՞նչ թաւուր տղէրանց անուննիր ես տալի···գանա ես իմ աղջիկը պիտիմ փեշաքրի տա՞յ···էնդու համա իմ պահի, մինծացրի, վուր խարազի, ան կալատողի կնիկ նստեցնի՞մ···Զէ, գեթաղվա···մէ աղջիկ ունիմ, կուզիմ վուր չինովնիկի կնիկ տեհնիմ···(երգում է)

Չինովնիկի կնիկը կամպանիումը ջոկվում է,
Թէ դուզ ղուգս էլ չունենայ, իր պատիւը վրէն է·
Ինչ վուր հաքնի թանկագին, ամէն բանը սազում է···
Բարեծնունդ կամ ազնիւ պատուանունը վրէն է:

ՄԵԼՔՈՅ.

(Երգում է)․ Փեշաքմի հնիկը տան հաստատուն գերանն է,
Երէխերանց, տան կարգին պահող կարող տիկինն է․
Լաւ կընիկը ամէն տիղ իր նամուսով ջոկվում է․․․
Տան տիկին, տան տիկին պատուանունը վրէն է:

ՆԱՏՈՅ.

(Նստելով իրա տեղը)․ Լա՛ւ է, լա՛ւ է․․․ դուն քունը գիտիս, իս իմը․․․ հիմիկանց դէն վուչ դուն չինոճնիկ պիտիս դառնայ, վուչ իս չինոճնիկի կնիկ․․․ ինչ վուր Աստուծ գրիլ էր իմ ճակտին, էնդուր արժնիք արաւ․․․ իս էլ շատ շնորհակալ իմ իմ Աստծէմէն․․․ կիսին էլ արժանի չիմ․․․ մադրամ Կէկէլիս կուզիմ չինոճնիկի տամ․․․

ՄԵԼՔՈՅ.

Ա՛ կնիկ, Աստուած սիրիս ձեռը վիկալ չինոճնիկներէմէն․․․ իս իմ բաբ փեշաքրի կուտամ, վուր իմ լիզուն իմ փեսի վրայ մինծ ընի․․․ չինոճնիկի մօտ իս ի՞նչ պատիւ պիտիմ ունենայ․․․ ով գիտէ հիտ էլ խօսելու լայիղ չանէ․․․ ան ի՞նչ պիտիմ խօսի նրա հիտ․․․

ՆԱՏՈՅ.

Ընչէ՞ չիմ խօսի․․․ բերնումս լիզու չունի՞մ․․․ (յանկարծ աչքը գցում է պատուհանին) վա՜յ, քա՛․․․ մօցիքուլ Եօվանէն անց է կենում․․․ կանչէ՛, գեթաղվա․․․ տիս ինչպէս Աստուծ ռաստ է բերո՞ւմ․․․

ՄԵԼՔՈՅ.

(Ծեծելով պատուհանը) Պարո՛ն Եօվանէ, պարո՛ն Եօվանէ, համեցէք, տո՛ւն համեցէք, խնդրինք․․․

ՆԱՏՈՅ.

Ի՞նչ լաւ բան էլա՞ւ․․․ մէկ էլ փնտրելու չը դառաւ․․․

ՄԵԼՔՈՅ.

Տեհնինք քու մօցիքուլը ինչ կօնէ․․․

ԵՕՎԱՆԷ·

(Ցօն մանելով). Բարի աջողում···վօ՞նց էք, լա՞ւ էք, առվօ՞ղջ էք···

ՆԱՏՈՑ·

Համեցէք, նստի···

ՄԵԼՔՈՑ·

Փառք Աստծու, կանք էլի, որ դադում էնք, որ ուտում էնք:

ԵՕՎԱՆԷ·

Ընչի՞···գանա առուտուր չունի՞ք···

ՄԵԼՔՈՑ·

Ի՞հ···էլ մի՛ առի հիմիկուայ առուտուրը···խիստ քնաստութին է···հացը թանկ, գինին թանկ, ամէն բանը թանկ, մուշտարին քիչ···էլ ի՞նչ առուտուր:

ԵՕՎԱՆԷ·

Հա՛· շատ ղուրդ ես հրամանք անում· հորէս մեր փեշակն էլ խիստ սատացել է···ըլսօրա է ընկել, ամէնքը խօսում են աղջկերանց հետ· մեծարքումը, բալումը ,տանցաւատ են խաղում, ձեռներէմէն բռնում էն···էլ ով է մօյերը կարօտում···իրանք իրանց ձեռքով բանը քուլթաւ են անում···

ՄԵԼՔՈՑ·

Ի՞նչ անենք աղէր, աշխարքս շուռ է էկի···

ՆԱՏՈՑ·

Եօվանէ, գլուխս ընչու ջավա տուենք քե՞զ···մենք ուզում էնք մեր աղջկան էս տարի նշնենք···շատ ուզողներ կան, մադրամ իմ աչքումը մուչ մէկը չէ գալի, ծծիրս վրա չէ անում···ես կուզիմ չինովնիկի տամ···Մայինց հիմի բարեկենդանք է···քու պատիւն էլ ես գիտիմ···

ԵՕՎԱՆԷ·

Լա՛ւ կուլի, ընչի՞ չէ···ես լաւ լաւ տղէք շատ ունիմ աչքիս տակումը: Գ՛ուզը ինչ ղդամ է···

ՄԵԼՔՈՑ·

Ցխուն Թումամն չոր փուղ, լաւ բահր ու բաժինք, թէ վուր տղէն լաւ ըննի···

ԵՕՎԱՆԷ·

Ի՞նչ ես հրամանք անում, պարո՛ն Մելքոյ··· հիմի վո՞ւր լաւ հայ չինովնիկ տղէն 50 Թումանով աղջիկ կու առնի··· կուլի վուր պատահի ուրիշ հաւատի օմքին···էն էլ չիմ կարծում, թէ լաւ օմքին ըննի···

ՄԵԼՔՈՑ·

Ի՞նչ գլխիս իմ տալի ուրիշ հաւատի օմքինը···Իս հայ իմ, կուղիմ, վուր իմ փեսէն էլ հայ ըննի, նրա էրէխէրքն էլ հայոց էկեղեցումը կնքուին···Ուրիշ հաւատի օմքնու տամ, վուր տանի իմ աղչկայ հաւատն էլ փոխի՞, ան իմ հաւատի վրա ծիծաղի՞···Չէ աղբէր···էդ իմ բանը չէ···

ՆԱՏՈՑ·

Ինչի՞ կօսէ··· գանա ուրիշ հաւատումը լաւ տղէրք չըկա՞ն, վուր իրանց կնիկերանց հաւատին չին դիպչո՞ւմ···խաչը գիտենայ, վուր նրանք միր հաէրու վրա լաւ ին պահում կնիկերանցը···միշտ զուգած, ոսկէքով, լաքիաներով, փառքով ու պատուով, միշտ պօդրուչկով ին ման ածում, դըրօշկայ ան կալասկայ նստելուց կռնէմէն ին բռնում···աբա միր հայը վո՞ւրն է էսունք անում: Չէ, գէնթաղվա, թէ վուր լաւ ռուս ան ուրիշ հաւատի չինովնիկ ըննի, իս նրան լաւ աշիմ աղջիկ տալը քան թէ մէ հայ փէշաքրի···

ՄԵԼՔՈՑ·

(Բարկանալով). Գլուխդ քարը տու· էս դուն, էն քու աղջիկը· իս չիմ խառնուի···իժում վուր վայ տալու դառնայ, քու հօգին ջուղաբ տայ:

ԵՕՎԱՆԷ·

(Վերկենալով) Լաւ է, մի՛ կռուէք· խմացայ ձիր ուզածը··· հալա ջեր հուզրումը վուչ էն կայ, վուչ էն· չալիշ կու-

գամ . . . մագրամ, թէ որ ձիր հաւնած աղէն ծախիմ, տասը թումաններդ կու առնիմ, կէսը կս գլխեմէն, կէսն էլ օմքնու պահ կուտանք, վուր պակից ետով վէկալնիմ...

ՄԵԼՔՈՑ և ՆԱՏՈՑ.

Լաւ կուլի. օղօնղայ լաւ տղայ ճարիս, էդ հիշտ է...

ԵՕՎԱՆԷ.

Մնաք բարով.. կուլի էսօր էվէտ ձիզ խմաց տամ...

ՆԱՏՈՑ.

Խէրտ լաւ կուլի...

(Եօվանէն դուրս է գնում.)

ՄԵԼՔՈՑ.

Տեհա՞ր վուր ասում էի, թէ մօցիքուլնէլ բան չի շինի...

ՆԱՏՈՑ.

Կու տեհնիս, թէ չի շինի...իս առխային իմ...

ՄԵԼՔՈՑ.

Լաւ է, կարճ կապէ...նուր մէկանց մի կցի զահլէտ տանելու...իս գնում իմ փողոցը... (դուրս է գնում:)

ՆԱՏՈՑ.

(Մենակ մնացած). Վ՞ունց չէ...պօլապօժկէքով ու բուռնուտով աղջիկ իմ պահի, ու փեշաքրի տամ, վուր կերակուր էփիլ տան ու լուացքնիր անիլ տա՞ն...չէ գելթաղվա...իմ նեժնի պահած Կէկէլիս չինովնիկի պիտիմ տայ... Քօծ շուշան, ղաղխիէս բի. (մտեռնալով դրանը) գնամ տեհնիմ իմ քուր Կատարինէն ի՞նչ է կարում իր աղջկայ համա... (դուրս գնալով) քօծ, դուռը կողպէ...

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆ ՍԵՆԵԱԿԸ. (առաւօտ)։

ԿԷԿԷԼ, ՇՈՒՇԱՆ, յետոյ ՓԵՓՈՅ և ՔԵԹՈՅ.

ԿԷԿԷԼ.

(Ներս մանելով ու գէս ու գէն մտիկ տալով) Էս ի՛նչ հալն է էս օթախը. (ձէն է տալի) Շո՛ւշան... ախըր բէ, էսղացօրէն մէջ աւլէ. (Շուշանը առնում է գալի աւելը ձեռքին և սկսում է աւլել. Կէկէլը մանէ գալի) Էդ պրծնիս, գնա Քեթոյին ու Փեփոյին կանչէ, մէ պտի խօսինք... (Շուշանը դուրս է գնում). Ի՞նչ լաւ կուլի վուր չինիճնիկի կնիկ դառնա՛մ... Հէստի շուրիր կուկարիմ վուր, վուր, վուր... հաւը չըլնի... այ թէ մի աղջկերքը կու տրաքին... (Մօտենում է հայելին և դրստում է կախիքները, ճակտի աղլուխը), բաս չէ՞ ու, փէշաքրի կնիկ... ինձպէս պէտուած աղջիկը փէշաքրի լայիղ է՞...

ՓԵՓՈՅ և ՔԵԹՈՅ.

(Ներս մանելով և պաչուելով) Բարով Կէկէլ... Ի՞նչ ես անում... (Նստում են թախտի ծէրին. Շուշանը ուղղայում է սենեակը և ծաղկերը սրբում է).

ԿԷԿԷԼ.

Ի՞ս լաւ իմ, դո՞ւք վունց էք... Շո՛ւշան, գնա իմ կարը բէ էստի, ասանք էլ ինձ քօմակ կօնին։

ՓԵՓՈՅ.

Ի՞նչ ես կարում։

ԿԷԿԷԼ.

Վո՛ւնչինչ, էնէնց անմիղ բանիր է։

(Շուշանը բերում է կարերը, թել ու ասեղներ. աղջկերքը վայ են անում կարերը և նստում են կարելու. Շուշանը կանգնում է դրան մօտ)

Ի՛ս ձիզ մէ նուր բան կ՚օսիմ, թէ օվքնու չիք ասի...

ՔԵԹՈՅ և ՓԵՓՈՅ.

Ո՞ւմը պիտինք ասի... քիմէն չիմ արմնում..

ԿԷԿԷԼ.

Ինձ նշնում են...

ՓԵՓՈՅ և ՔԵԹՈՅ.

Դ՞ուրդ... ո՞ւմն ին տալի..

ԿԵԿԵԼ.

Խաչը, չիմ գիտի...էրեկ իմ մամէն ու դեդէն երկար կըռուում էին. վէրջը էկաւ մէ մոցիքուլ ու իմ դէդէն փուղ խօստացաւ նրան, վուր լաւ չինովնիկ ճարէ...

ՓԵՓՈՅ.

Քա՛...չինովնիկի կնիկ կուլի՞ս...ո՞վ գիտայ քի...

ՔԵԹՈՅ.

Միթաս մի՛նծ բան է՞...

ՇՈՒՇԱՆ.

Իս էլ խիմացայ, աղջիկ պարուն, վուր աղ՚էն կամք չ՚էր տալը չինովնիկի տայ, ու մինծ աղջիկ պարունը քարը վ՚ըր էր կալի, գլուխը դէմ էր արի, թէ պիտիմ չինովնիկի տայ... իժում մէ մարդ տուն էկաւ... իս դունիմէն էնդուայ խիմացայ վուր նրան տասը թումին փուղ խօստացան..

ՓԵՓՈՅ.

Տեհնինք ի՞նչ թաւուր աղայ կու ճարիս քի համա..

ՔԵԹՈՅ.

Մօցիքուլդ ո՞վ է...

ԿԵԿԵԼ.

Չիմ ճանչնայ...

ՔԵԹՈՅ.

Լա՛ւ է, լա՛ւ է, թաքցրու, քի համա պահէ...մինք մօցիքուլ չինք ուզի...

ՓԵՓՈՅ.

Գէնացվա, կէկէլ ջա՛ն, իբ վուր աղէն գայ ձիր տուն, խմաց տու, իս կու գամ դրան ճղքնեմէն մտիկ կուտամ, թէ ինչ թաւուր աղայ է...

ԿԷԿԷԼ.

Իմա՛ց կօնիմ, Հաղուրդը գիտենայ...դուք լոմ գիտէք վուր էս ճիզմէն Թաքուն բան չունիմ, քուխրտերանց պէս մէտի ինք մնծացի...

ՓԵՓՈՅ.

Էսօրէվէտ իմ դէդին կօսիմ վուր ինձ համա անտիկ մուէ կտրիլ տայ, քու հարմնիքութին նուր դերիայ կու կարիմ.. Իժում քի համա վունչիչ չի՞ն կարում..

ԿԷԿԷԼ.

Վ՞ունց չէ...իմ մամէն մէ պատի ղայիմութիւն է անում. մադրամ իմ դէդէն էրէկ էվէտ կտրիլ էրիտ ինձ համա դէ-րիացու դա՛մա...իժում մէ հէատի սիրուն կրինօլին առաւ վուր, վուր, վուր, խիլքեմէն կօնէ...մուղաֆ տուէք բէլիմ....
(դուրս է վաղում, Շուշանն էլ էտևից).

ՓԵՓՈՅ.

Լաւ տարի դրա՛ն գայ, ինչի նմանկուլ Թադի տակումը. աքա դա իմ համն ու կտուրն է՞...

ՔԵԹՈՅ.

Գ՛ուրդ է, քի պէս սիրուն չէ, մադրամ նեժնի կի է...

ՓԵՓՈՅ.

Ի՞հ...շատ չէլա՛ւ...մէ դուն էս նեժնի, մէկ էլ դա՛...

ՔԵԹՈՅ.

Էս քի պէս սիրուն չիմ, մադրամ դիփունանքը ասում ին վուր քի վրա աղէ իմ..

ԿԷԿԷԼ.

(տուն գալով) Իմ դէդի օԹախումն է քաշարած, դուռը կոխպած է...իժում կու շանց տամ..հէատի սազ է գալի ինձ...մէջքս հէատի բարակ է շանց տալի, վուր չէլած...

ՔԵԹՈՅ.

Ծատ լէնը լա՛ւ չէ...մէ պատի քամի ընի, ինչկլէ ծնկնիրդ կերևայ...

ՓԵՓՈՑ.

Զէ. ի՞նչ ես խօսում…նեւտայի ովոր մօդայ չի գիտի, եսկի չըխօսի…քանի լէն ըռ՛ի, ենղադայ լաւ է…հիմա դիփունան-քը լէն չին հաքնում…քամին ի՞նչ պիտի անի…ուփրօ լաւ չէ՞ վուր մէ պատի բարձրացնի, վուր պօլապօժկէքն ու չուլ-քիքը էրևա՞ն. . մաշ ե՞ն լաւ է, վուր փիշերքումը կօլօլած ընի՞…

ԿԷԿԷԼ.

Իմ դէդէն լէնը ջօկից…հալբաթ բան գիտէր…ամա ինչ-պէս թանկ է…ութ մանէթ պակաս չէրիտ կտրուելուն…

ՓԵՓՈՑ.

Ո՞ւմէն առիք…բլօտի մաղազի՞ումը…

ԿԷԿԷԼ.

Զէ, Ֆարօյի մաղազիումը…

ՆԱՏՈՑ.

(Տուն մանելով) Ի՞նչ էք անում աղջկէրք…Կէկէլ, ի՞նչ ես պարապ նստի. կար չունի՞ս…

ԿԷԿԷԼ.

Հօրէս (ցոյց է տալի կարը) մինք կար էինք կարում…էս նը-մուշին վէր դրինք…դէդի բաղնիքդ տամ, դնամ կրինօլինըս բէրիմ…

ՆԱՏՈՑ.

Հա՛. կանօլի՞նդ…

ԿԷԿԷԼ.

Ախ, դէդի, ի՞բ պիտիս անունը լաւ սովրի…խան ղինօ-լին, խան կանօլին, խան կլինուլին…չի՞ս կանայ մոքումդ պա-հի՞…կրինօլին, կրինօլին:

ՆԱՏՈՑ.

Ի՞հ, հո՞ւղիմ քու գլուխը…դուն ինձ պիտիս սովրեցնի…
…ես վունց վուր գիտիմ էնէնց կօսիմ..ես նուր մօդնի աղ-ջիկ չիմ, վուր գիտենամ…դուն դրուստը իմացի, հաքնողը դուն ես…Իժում կու շանց տամ կանօլինը, ջէր բանուիմ:

..Իմ գլխի աղլուխը հասի խոմ չէ...(մնտրում է և գտնում է թախտի վրա)..: Էս գնում իմ ժամը, դուք աղջկերք հառի կացէք Կէկէլի մոտ...քօծն, զադիկին բի. (Հոյեւլի առաջնը ծածկում է գլխի աղլուխը, քօծը բերում է զադիկին...նստում ծածկում է և դուրս է գնում. քօծը ճամփու է գնում, յետոյ հետ է գալի):

ԿԷԿԷԼ.

Սիրտս մաշից էս կարը. . .էկէք վիճակ գցինք. տեհնինք ում բախտին ինչ դուրս կուգայ...

ԱՄԷՆՔԸ.

Լաւ կուլի, լաւ կուլի..,

ԿԷԿԷԼ.

Քօծ. գնա բադիկին բի...(քօծը դուրս է վազում) տուէք ձիր մատնիքնիրը... (ամէնքը հանում են մատնիքնիրը և տալիս են Կէկէլին. քօծը բերում է բադիկն. Կէկէլը մատնիքնիրը մէջն է ածում. Շուշանը իր մատնիքը մէջ գցելով ասում է՝ «էս էլ իմ մատնիքը», նստում է գետնին, աղջկերքը նստում են բոլորակաձև թախտի և աթոռների վրայ, և սկսում են երգել)

1.

Գնացի ջուրը տեսայ, ջան գիւլում, ջան. ջան.
Ծարաքայ դուռը տեսայ, ջան...
Ծարաքայ դռան մէջին, ջան...
Մէկ սիրուն տղայ տեսայ, ջան դիւլ".
(Շուշանը հանում է մէկ մատնիք, և տալիս է Կէկէլին:)

ԿԷԿԷԼ.

Փեփոյի մատնիքն է...ինչ լաւ բան դուս էկաւ...էրնէկ քի, վուր քու մարդը սիրուն կուլի..նետայի իմ մարդն էլ սիրուն ըլնի, ուրիշ դարդ չիմ ունենայ...

ՓԵՓՈՅ.

Ի՞հ. նետայի քի...սիրունը ինչ կօնիմ, թէ վուր խասիաթը լաւը չի ունենայ...

ԿԷԿԷԼ.

Ափսոս չէ սիրունը՞..խասիաթը դուն կու փոխիս..

ՔՆԹՈՑ.

Վո՜ւյ էն, վո՜ւյ էն…նէ՛ռայի իմ մարդը չէն ըննի, ուրիշ վունչինչ չիմ ուզի…

ՇՈՒՇԱՆ.

Լա՛ւ է, գիւլում ասէք…

2.

Գանձու քամին գալիս է, ջան գիւլում ջան, ջան.
Թիկնամէջքս տալիս է, ջան"…
Ճամփայ արէք, անց կենամ, ջան…
Կարօտ եարս գալիս է, ջան գիւլ".

(Շուշանը հանում է մէկ մատնիք և տալիս է Կէկէլին)

ԿԷԿԷԼ.

Քեթոյի մատնիքը…

ՓԵՓՈՑ.

Ա՞…հալբաթ դուն օմքնու սիրում իս, հա՞…ընչի՞ իս միզ-մէն թաքցնում…

ՔՆԹՈՑ.

(Ամաչելով) Ջէ՛ խաչը գիտենայ, իս էստի օչով չ՚ունիմ…

ԿԷԿԷԼ.

Էնդո՞ւ համա էիր ասում, թէ մօցիքով չիս ուզի…

ՓԵՓՈՑ.

Թէ էստի օչով չ՚ունիս, հալբաթ քու սիրածը ուրիշ տիղ է…բաս շուտով կուգայ, հարսնիք կուտինք…

ՔԵԹՈՑ.

Ջեր տէհնինք Կէկելի հարսնիքը ինչ Թաւուր կուլի…,

3

Ջուր է գալի արխումը, ջան գիւլում, ջան, ջան.
Աբրէշումէ չարխումը. ջան գիւլ…
Իս էն Թաւուր մարդ կուզիմ, ջան…
Ջամարդ ընկի խալխումը, ջան…



21430

(Շուշանը հանում է մէկ մատնիք և տալիս է Կէկէլին)

Կ Է Կ Է Լ.

Իմ մատնիքն է...

Փ Ե Փ Ո Ց.

Ի՞նչ լաւ բան դուս էկաւ...քու մարդը խալխումը ջո- մարդ կուլի...էրնէկ քի, Կէ՛կէլ. մուր մարդու իս գնում. ..չիմ գլխի իմ մամէն ինչացու է պահում ինձ տանը...հե- րու իրիք տիղէմէն խօսում էին ... իմ մամէն քար դառաւ հարուր Թումնէն աւելի չէրիտ...

Կ Է Կ Է Լ.

Իմ մամէն էլ յիսուն Թումնի աւել չէ տալի...

Շ Ո Ւ Շ Ա Ն.

Հիմի իմ վիճակն է Ճացի...տեհնինք ինձ համա ինչ դուս կու գայ...

4

Հաց իմ Թիֆլի գալթացու, ջան գիւլ"...
Իմ եարը մելիքացու, ջան...
Գիրդումը օխտը տղայ, ջան...
Իմ եարի նոքարացու, ջան...

Ք Ե Թ Ո Ց.

Հուղիմ քու գլուխը...դուն պիտիս մելիքի կնիկ դառ- նա՞յ...

Փ Ե Փ Ո Ց.

Մելիքի կնիկ չըլնի, քեօխվի կնիկ խոմ կուլի...բա՞ ուճիրս ...մէ պատի կուղիան է, Թէ չէ, ուրիշ ամէն բանը լաւ ունէ...

Ա Մ Է Ն Ք Ը.

(ծիծաղելով) Լաւ տարի դըրան գայ ինչ չաւը դա է...

Կ Է Կ Է Լ.

Հիմի էնէնց դիւլում ասինք առանց վիճակի...

ԱՄԷՆՔԸ.

Ասինք...

ՓԵՓՈՅ.

Ես կասիմ...

ՔԵԹՈՅ.

Չէ, ես կու կցիմ...

ԿԷԿԷԼ.

Նանինց չէ... առաջ մէկը ես կասիմ, իժում մէկը Փեփոն, հժում մէկը Քեթոն, իժում մէկը Շուշանը, ու էտէնց էլի կարգով կասինք...

ԱՄԷՆՔԸ.

Լա՛. լա՛...

ԿԷԿԷԼ.

(Սկսում է) Լուսնիակ կամար կամար, ջան...
Մեռնիմ աչքունքիդ համար, ջան...
Ցիսուն օր պաս իմ պահի, ջան...
Քու ալից խաթէր համար, ջան...

ՓԵՓՈՅ.

(Սկսում է) Սիրունը խալն ինչ կոնէ, ջան գիւլ".
Սիպտա ձին նալն ինչ կոնէ, ջան...
Եարը վուր եարին սիրէ, ջան...
Խօսքն ու զրոյցն ինչ կոնէ. ջան...

ՔԵԹՈՅ.

(Սկսում է) Ամպիլ է, ձուն չէ գալի, ջան գիւլ".
Մթնիլ է, տուն չէ գալի. ջան գիւլ".
Չեռու տիղ մէ եար ունիմ, ջան...
Մէ մատը գիր չէ գալի, ջան".

ԿԷԿԷԼ.

(Սկսում է) Լուսնիակ անդէն գիշեր. ջան...
Սև աչքեր, կարմիր թշեր, ջան...
Իմ եարը ինձի տուէք, ջան...
Ձիգ եկր ու բարի գիշեր. ջան...

ՇՈՒՇԱՆ.

(Սկսում է) Գիլանի քամին գալիս է, ջան գիւլ"։
Դուռը շաղ շաղ տալիս է, ջան...
Աղջիկ վեր կա՛ց դուռը բաց, ջան...
Գլխից տէրը գալիս է, ջան....

(Վախեցած) Ղուրդ վուր...ա՜յ հօրէն աղջիկ պարունը գալիս է....
(Շուշանը դուրս է վազում և տանում է բաղիէն)

ԿԷԿԷԼ.

Էկէք նստինք կար անելու, միթամ դիփ կար ինք արի...
(Վազում են, վեր են առնում կարերը և նստում են ջոկ ջոկ տեղերքումը)

ՆԱՏՈՑ.

(Տուն մտնելով) Օղորմած կենայ...քօծ, արի ղադիփէս տար...
(վեր է ցցում թախտի վրա. քօծը գալիս է վեր է առնում) ո՜ւֆ, դադրեցայ
(նստում է)...էնղըդամ աղջկերք կէյին էկեղեցումը, վուր չէլած
...էլ ո՞ւմը կօսիս, վուր էնդի չէր...հեստի զուքսած էին,
հէնց գլուխնաս տակի ծաղիկնիր ին...մազով շուրէքը, դուն
ասիրիս, ապլօփնիրը, դիփ ատլաս ու մախմուր.....քոռանամ իմ
Մելքոն, վուր մէ քաթիբայ էլ էս տարի ինձ համա չը կա-
րից...ամօթու մնիլքս վիր էր թափում..

ԿԷԿԷԼ.

Քու քաթիբին րա՞ ուզիրս...հերու չէր վուր կարեցի՞ր...
իմ խիղճ մամէն վո՞ւր մէ ջուրը նընկնի...քիզ զուքէ, թէ ինձ...

ՆԱՏՈՑ.

Գանա քիզ վուր զուքէ, ինձ պիտի տկլուր թողնի՞...

ԿԷԿԷԼ.

Ո՞վ է ասում...մադրամ ամեն տարի էլ խոմ չի՞ ընի նուր
քաթիբայ կարիլ...

ՆԱՏՈՑ.

Ջէնդ կտրէ, լպստած...ինձ խիլք իս սովորցնո՞ւմ...իմ մարդն
է, ջանը կուհանիմ կարիլ կուտամ..դուն վուր մարդ կու ճա-
րիս, էսէնց արա, մէ գերխով իրեք տարի կացի...ով գիտէ
կէսօրը անց է...էն մարդը ով գիտէ տուն էլ չըդայ ճաշին...
գնանք հաց ուտինք... (ամէնքը գնում ին. Վարագոյրը գոցւում է.)

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

*Թատրոնի բեմը ցոյց է տալի փոքր սենեակ, մէկ անկողնակալ, մէկ սեղան, երեք աթոռ, սեղանի վրայ մէկ բոթիլ գինի, երկու ըմպանակ, հաց ու պանիր։*

ԵՕՎԱՆԷ և ՍԱՐԳԻՍ (*ուտում են և խմում են*)

Ե Օ Վ Ա Ն Է.

Դուն շատ ես խօսում. բողազդ կու ցամքի. մէ ստաքան գինի խմէ... ես ինչ որ ասում իմ, էնէնց լաւ կուլի...

Ս Ա Ր Գ Ի Ս.

(*խմելով*) Դուն հեստի բան կօնես, վուր վերջը քաղքումը կենալ չես կանայ։ Հերու չէ՞ր, վուր խիղճ խաշապնից Գեվոյի կնկան օյն էկար, ու էրկու ամիս թախէլր կացի՞...

Ե Օ Վ Ա Ն Է.

Էնդումը ես վունչինչ միղ չունէմ...

Ս Ա Ր Գ Ի Ս.

Բաս ո՞վ էր միղաւուրը... դուն չէ՞իր վուր ախչըրին ու աղջկան տալիր ուսի էկեղեցին, էնդի տէրտէրը ինչ վուր բանիր կարդաց, չոքեցրուց ու վէկացրուց, խմում հիտ էկանք հարսնիքի տունը... խիղճ դէդէն էլ կարծելով, թէ աղջիկը պսակված է, հանկից, փուղերը տըլին էրիտ. մէ շաբթուան վրայ տղէն փախաւ... խիղճ պառաւ կնիկը տարաւ իր աղջկան տէրտէրի մօտ... նա ասաց, թէ ես չեմ պսակի դրան. մէնակ մեղքս է վուր, կօսէ, դա մէ ախչըրի հիտ էկաւ իմ էկեղեցին. ախչըրը ինձ խնդրեց պաշտում անիլ, ես էլ պաշտում կատարեցի.. Թէ էն աղջկայ բխձու ճանկը կընկնէիր, նա քիզ մաս մաս կօնէր..

Ե Օ Վ Ա Ն Է.

Աշխարքումը էտէնց բանիր կուլի... փուղ դադիլը հիշտ բան չէ... ամէն բանումը խիլք ու ուստութին կուզէ... դուն թէ խիլք ունիս, քի համա պահէ... էս բանումը ես քսան թուման իմ դադում... տասը թուման էսթենէմէն, տասը թուման էնթենէմէն... քսան թուման փուղ է անում... էյ... հալալութինով վո՞ւրդի կու ճարիս...

ՍԱՐԳԻՍ.

Իժում էդ վօ՛նց սալքեցիր էտէնց չուտ...

ԵՕՎԱՆԷ.

Ջուկը իրան իրան գամբը նընկաւ...էրէկ առաւօտ նստած իմ օթախումն վէքրում... մէ՛ բաշ տեհնիմ դուռը բաց էլաւ, տուն մտաւ մէ ափիցար..իս նրան շատ ժուկ է, վօր կու ճանչնամ..հարցրի, թէ ի՞նչ խաբար է վօր առաւօտանից վաղ վաղ էկիլ է...իմացայ վօր էն գիշիրը թուղթ է խաղացի, մէ ամսուայ ջամագիրը դիփ տանուլ է տուի, ու քանի թումնի էլ վէքսիլ է տուի մէ ամիս վադով...ինձ աղաչանք է անում, թէ փուղ ճարէ...աչա իս վօ՞րղանից կանամ նրա համա փուղ ճարի...ասի մէ քանի օր մուլլաթ տու, չալիշ կուգամ..նա էլ էդ ումուդով գնաց...Էն օրն էվէտ իս անց էի կենում Հալաբրումը...մէ բաշ խարազ Մելքօն փանջարէն ծեծից, ինձ տուն կանչից: Գէսից գէնից խօսելու էգնէն, ինձ խնդրեցին վօր մէ լաւ աղայ ճարիմ նրանց աղջկայ համա...հարցրի թէ փո՞ւղը ինչ ղադամ է, ասցին՝ յիսուն թուման. իս ասցի, թէ էդ փուղով լաւ հայ աղայ չի առնի...աղջկայ հէրը կամք չէր տալի ուրիշ հաւտի օվքնաւ տալու, մաղրամ դէդէն չուստ փափկեցաւ...

ՍԱԳԹՕ.

Գիտիմ..կնկըլքը չուստ փափկող ին...

~~ՈՍԱ. ՔՈՑ.~~

Էն նմուտին իս մտքումն դրի էն քեասա ափիցըին..հաղէր նա փուղի համա հեասի խիղղուած է, վօր յիսուն թումանը նրա աչքումը հինգ հարուր թուման կ'երևայ, նրանք էլ նաղդ փուղ ին տալի...Էն նմուտին դուրս էկայ Մելքօյի տանէմէն, վազեցի ափիցըի մօտ, խօսեցայ, ու տասը թումնի բարաթ առի... էնդուց նուբաթկանց էկայ Մելքօյի տուն, ասցի թէ լաւ աղայ իմ ճարի...հինգ թումանը էս գլխէն առի, հինգ թուման էլ պահ տուինք ղառափ Գիգոյին, վօր պսակելուց ետոյ ինձ տայ... Հիմի դուն տեհնո՞ւմ իս վօր իս երկու կողմէն էլ շահ ունիմ։

ՍԱՐԳԻՍ.

Իժում ճարած աղէ՞դ ով է...

ԵՕՎԱՆԷ.

Թիֆլիսեցի պօլկի Պրապորձիկ Կարնաւկի..ինքը պօլակ է...

խիստ գարդիմանդ ու քէֆ սիրուղ տղայ է, մադրամ ալք-
լուր է...

ՍԱՐԳԻՍ.

Էնտէնց հա՞... ուժուամ վուր էն փուղերը փչրէ, կնկան ինչո՞վ պխոի պահէ...

ՍՕՎԱՆԷ.

Է՞հ օխնած... հինց գիտենաս, թէ նրանց սաղ կինքի դարդերը ինձ էն պահ տալի... գլուխնիրը քարը, ինչ կուզին անին... իս իմ փուղը խոմ կու առնիմ...

ՍԱՐԳԻՍ.

Էրնէկ քու հոգուն... սաղ էն խիղճ աղջկան անդանակ մորթում իս էլի... հալբաթ նրա տէրն էլ Աստուծ կուլի...

ՍՕՎԱՆԷ.

Էրևում է, վուր դուն խիստ հոգեսէր մարդ իս.. կուլի՞ վարդապետի աշկերտ իս էլի, վուր էտէնց լաւ քարոզնիր գիտիս...միթամ մինձ պասին էկէղեցումը քիչ ին ղահլէս տանում, սա էլ էկել է էստի մորաբանութին է կարդում գլխիս. գնա կորի... իս քու գլուխս չունիմ... էստի փուղի համա կլամփուց իմ տալի, սա էլ էկել է ինձ համա քարոզ է տալի ... (Երգում է.)

Փուղ դաղիլը խիստ դժար է, դիփունանքը էս գիտին,
Իս վունց կանամ ձեռաց թողնի, ճանկս ընկած սուչային
Հորէս կուգայ մէր մինծ պասը, ո՞վ փուղ կուտայ մօցիքլին.
Իմ ձեռքումը քանի թումանը, մինծ մինծ բանիր կու տեհնին:

ՍԱՐԳԻՍ.

Փուղը պէտք է կինքի համա, անփուղ մարդը կորած է.
Փուղ դաղելու լաւ ճամբէքը դիփունանցս տուած է.
Մադրամ փուղով հոգի կորցնիլ սատանի մոգոնած է,
Հառամ կուլի միշտ էն փուղը, վուր առունով դաղած է։
— Լա՛ւ, էդ թողնինք... հիմի ինձմէն ի՞նչ իս ուզում....

ՍՕՎԱՆԷ.

Սարգոյ ջան, դուն պէտիս ինձ հիտ գնայ Մելքոյինց տուն ու

ինչ վուր իս կօսիմ, դուն պիտիս վկուԹին տայ... քիզմէն ու-
րիշ վունչինչ չիմ խնդրում...էնղացէն կէհանք Կարնեւսկու մօտ.
Նա էս օր ինձ կու մնայ ինչկլի ահալԹի վէյը...

ՍԱՐԳԻՍ.

Ինձ ի՞նչ կուտաս էստու համա...

ՅՕՎԱՆԷ.

Քիզ մէ ձիուք լաւ կաբացու մահուտ. մէ ջուխտ լաւ լափչիք. մէ լաւ գդակ...

ՍԱՐԳԻՍ.

Փուղ չիս տա՞յ...

ՅՕՎԱՆԷ.

Լաւ է, մէ Թուման փուղ էլ կուտամ (Մէկ կողմը խօսելով) վուչ մէկը խոմ չիմ տալու, Թուղ ումրկով մնայ. Թէ քիչ է, էրկու Թուման կուտամ հարսնիքից էտով...ղմբուլ իս...

ՍԱՐԳԻՍ.

Մաշ բարաԹ տու...

ՅՕՎԱՆԷ.

Ինձ մաւայ չէ՞ս...լաւ, բարաԹ էլ կուտամ (մէկ կողմը խօսե-լով) միԹամ բարաԹիցս ինչ պիտի ստանայ...Թող ջուր անէ, խմէ...(Նրան) գնանք, չ՛ուշանանք...

ԱՆԾԱՆՕԹ ՄԱՐԴ.

(Տուն մտնելով) Մօյլքուլ Յօվանէն Քասի է...

ՅՕՎԱՆԷ.

Իս իմ. ի՞նչ կուղիս...

ԱՆԾԱՆՕԹ.

Մէ խօսք ունէի քիզ մօտ Թագուն խօսելու...

ՅՕՎԱՆԷ.

Պարօն Սագօ, Թէ ինձ կու սիրիս մէ պստի դուսը բոլԹայ տու...(Սարգիսը դուրս է գնում)

ԱՆԾԱՆՕԹ.

Ինձ էս օր խիստ հարկաւոր է տասը Թուման...կու խնդ-րիմ, վուր ճարիս ինձ համա...

ՍՕՎԱՆԷ·

Առանց գրաւի փող չի ճարուի · · ·

ԱՆԾԱՆՕԹ·

Գրաւնիր ունիմ, մազրամ չիմ ուզի, վուր օմքին գխոենայ · · · իմ կնկայ օղերն է ու քորոյնիրը · · ·

ՍՕՎԱՆԷ·

Գրաւով կանամ փող ճարի, մազրամ շահը թումնին ամսէնը մէ մանէթ · · · թէ գուզիս, ինչկի իրիկուն փողը էստի կուգի, գրաւնիրդ բէր, թէ կ՚աժենան, կուտամ · ինչըղայ վազով կուզիս · · ·

ԱՆԾԱՆՕԹ·

Մէ ամսով · · ·

ՍՕՎԱՆԷ·

Մէ ամսուայ շահը էս գլխէն գուս կուգանք, ու վաղի վրա թէ չիս տայ փողը, գրաւնիրէ մէջ ձեռը վէկալ · · ·

ԱՆԾԱՆՕԹ·

(Մտածում է մէկ րոպէ)· · Ի՞նչ անիմ, խիստ կարէք իմ · · · լաւ կուլի · · · իրիկնապահը քանի՞ սահաթին բերիմ · · ·

ՍՕՎԱՆԷ·

Սահաթը օխտին · · ·

ԱՆԾԱՆՕԹ·

Մնաս բարով · · ·

ՍՕՎԱՆԷ,

Գնաս բարով · · (անծանօթը գնում է)· · · էս օր էն պատուէ կնկայ գրաւնիրու վաղէն թամամնցաւ · · · կեհամ, խնոց կենիմ · · թէ փողիրը կուտայ, կու բերիմ, էս մարդուն կուտամ · · · թէ չի տայ խօմ, գրաւնիրը կու ծախիմ · · էս օր բանըս խիստ աջողում է · · · (Երգում է)

Գիշեր ցերեկ մանգալով իս շատ բանիր իմ սէհնում,
Իմ գաղումներիս համա աշխին տղայ իմ շինում ·

Գրաւնիրով, մինծ շահով ես լաւ փողեր իմ ճարում,
Առանց ապրանք, անդուքան առուտուր իմ ես անում:
Աղջիկերանց օժիտը ինձ միշտ ծրարով են փնտռում,
Փրլթմնիր են ինձ տալի, փեշքաշնիր են խոստանում.
Բան չինելու ճամփէքը ես չուստ ու հիշտ իմ գտնում,
Թէ միջումը լաւ օգուտ ես ինձ համա իմ տեհնում:
Շատ անգամ էլ ընում է, փուք իմ տալը բռնում են,
Դատաւթինատեհներով ինձ ջարթում են, քրթիում են.
Իմ աչնումն չէ գալի, թէ նրանք ինձ հետ ջիգր անեն.
Թաք փող տան, թաք խէր տան՝ ինչքան գուզեն թող
ծեծեն:

(Դուրս է գնում:)

Վարագոյրը ծածկւում է.

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Թատրոնական բեմը ցոյց է տալի Մելքոյի տանը.

ՆԱՏՈՑ, ՄԵԼՔՈՑ, յետոյ ՍԱՐԳԻՍ, ՍԵՎԱՆԷ, վերջը ԳԱԲՌՈ և ԿԷԿԷԼ.

ՆԱՏՈՑ.

(Մտիկ տալով պատուհանին.) Էս ինչ ուշացաւ Ջօփանէն...

ՄԵԼՔՈՑ.

(Թէք ընկած մութաքի վրա). Մի վախենայ. կուգայ.. փողի փուղի բան կայ, էնդի էդթաւուր մարդիքը հէչ չեն ընկնի...

ՆԱՏՈՑ.

Էնա ինչ անէ խիղճ մարդը.. նրա փէշակն էլ էդ է...մադ-րամ լաւ ապրանք կը ճարում է...

ՄԵԼՔՈՑ.

Լաւ ասը էծէ նրան... հինգ թումանս ջեր կըլը՛ց, ջեբն էդի..հէմի տեհնինք ինչ թաւուր ապրյ կ ճարի...

ՆԱՏՈՑ.

(Պատուհանին մոտիկ տալով) Այ.. գալիս է...էն էլ ով է հետը չուխքաւուր..

ՄԵԼՔՈՅ·

(Յ բախմադրով) Հալալսըթ փաճառական մարդ է ճարի Կ'կէլի համա, ու դէմուդէմը տուն է բերում · · ·

ՆԱՏՈՅ·

Չէ գէթաշվա, ես ասիլ իմ չնաշխնիկ ճարէ · · ·

ԵՕՎԱՆԷ·

(Տուն մտնելով Սարգսի հետ) Բարի աջողում ձիզ · · · վո՞նց էք · · ·

ՄԵԼՔՈՅ և ՆԱՏՈՅ·

(Խորը մելկ տալով Սարգսի վրա) Փառք Աստծու · · ·

ԵՕՎԱՆԷ·

Սա իմ բարեկամն է · · · արա մտո կանանց խոսի · · պարոն Մէլքոյ, դուն խամ լաւ կու ճանչնաս խարաբաքինց Սարգսին · · ·

ՄԵԼՔՈՅ·

(Հանդարտությամբ) Հա · · դա՞ է · · · վո՞նց չէ · · · մաշքրամ աչքիս մէ պատի լաւ չէ ջոկում · · · դա խամ օ՞լուշաղաւոր է · · ·

ԵՕՎԱՆԷ·

Դիմից, օղլուշաղ էլ ունէ, փարչէք էլ ունէ · · ·

ՆԱՏՈՅ·

(Դանդաղ) Փառք Աստծու · · · մէջ բարեկարուեցաւ էլի · · · հո՞նց գլուխ թէ ճարած ալէն դա է · · ·

ՄԵԼՔՈՅ·

Է՛ · · · մեր բանը ինչ ալիր · · ·

ԵՕՎԱՆԷ·

Ձիզ համա մէ լաւ ալայ իմ ճարի · · · ամա առաջ գիփ խմացէք, իմում թէ չունելու բանուննիք, կու խօսինք · · Դուք ինձ փուղ էք տալի · · · ես իմ հոգուն ինչ ջուղաբ պիտիմ տայ, թէ վեր ալէն լաւը չընի, ու ես գոլէիմ · · · դանայ մենք Աստուծ չունինք · · ·

ՍԱՐԳԻՍ·

(Թաքուն) Քու օրումը վուչ Աստուծ գլխիս, վուչ հողի · · ·

ԽՕՎԱՆԷ.

Խաչը գիտենայ... հետս տղայ է, վուր հասը չունի... հարուստ, յուսեալ, լաւ չին սէր, լաւ ախղուժը. մէ ամուսայ եղնէն վրաերկու չինն էլ գուլուէ. ինքը սիրուն, պեռլած, ջահել.. ով գիտէ 20 տարեկան աւել չըլնի...

ՆԱՏՈՑ.

(Թաքուն) Վա՜յ, քա՛... էդ ինչ լաւը կուլի...

ՄԵԼՔՈՑ.

(Հանդարտ) Ո՞վ է, ազգը ինչ է...

ԽՕՎԱՆԷ.

Թիֆլիզեցի պօլիկ պրապուրշիկ Եկարինեակի...

ՄԵԼՔՈՑ.

Ռուս է...

ԽՕՎԱՆԷ.

Չէ, պօլակ է...

ՄԵԼՔՈՑ.

Չիմ ուզի, աղջիր...

ՆԱՏՈՑ.

Ընչի՞ չիմ ուզի... էդ Թաւուր աղէն, Թէ հայ ըլնի, գիտես Թէ քանի հազար Թումնիր գուզէ... ընչի՞ ուրախ չես, վուր քու ցնկուռտ 50 Թումնով էդ Թաւուր աղա իս ճարում...

ՄԵԼՔՈՑ,

Ա՛նիկ... խիլքդ գլուխդ հաւաքէ... ինչ գիտես Թէ ո՞վ է, վուրդլայէն է՞...

ԽՕՎԱՆԷ.

Թէ դուզիս գնանք իրա նաչալնիկէմէն հարցնինք... դուն խամ գիտես, վուր առանց նաչալնիկի հրամանի աէրոէրը չի պսակվի...

ՄԵԼՔՈՑ.

Գիտեմ. գիտեմ ... մայրամ ուրիշ հաւտի օճնու տալ չեմ ուզեր...

ԽՕՎԱՆԷ.

Քեզ ի՞նչ զաւի կայ նրա հաւտի հետ . . . քու աղջիկը կու մնայ հայ, հաւէց էկեղեցումը կու պսակուի...թէ կուզես թուղթ էլ կու առնենք, վուր էրէխէքը հայ կնքուեն...

ՆԱՏՈՑ.

Իս ու իմ հոգին, վուր շատ լաւ բան է. այլիս, Խօվանէ...
Ա՛ մարդ, թէ քու հոգին կու սիրես, քար մի դցէ Կէկէլի բաղդին...էդ թաւուր աղէն ձեռներէմէս չը կորցնենք...ի՞նչ կայ...թող պօլակ ըլնի....

ՄԵԼՔՈՑ.

(Մտածելով յետոյ). Է՛...էդ նշանակում է, վուր քու դամարները թուլցել են...գիտեմ վուր իմ հաւջաթ անելովը քեզ չեմ կանայ կոտրի...քեզ լաւ կու ճանչնամ, գիտեմ ինչ խասիաթի տէր էս...դուն վուր սատանի ձիուն նստես, էլ քեզ օշով չի կանայ զէնէր բերի...ես իմը ասի, դուն չես կարուում...թէ վուր ես հակառակիմ դուն ինձ չես զնջայնի...գիչէր ցերեկ միասպիտես ուտի, թէ լաւ ազայ կորցրենք, ուրիշը փայ չենացինք...բարամ...դուն գիտես...էս դուն, էս քու աղջիկը...ումը կուզես, տու. ես ձեռներս լուանում եմ...(Երթամ է)

Հաւջաթ ընկան բան հասկացնել ազամարդը չի կանայ.
Իր ուզածը նա միշտ կանէ, մարդու խելքին չի հաւնի...
Նրա խելքը աչքերումն է.. հախէմէն օշով չի դայ...
Թէ կամք չես տայ՝ միշտ տանդ մէջ կռիւ, շփութ կու բանի..

ՆԱՏՈՑ.

Թէ մարդկերանց խելքով գնանք, գիժ ու նանցմէն հետ կընկնենք.
Աղջիկ նշնելու բանիդը մենք ձիգ վրա լաւ գիտենք...
Դուք կուզէք վուր ամէն բանը էսօր էգուցաւա ցցենք.
Թաք ձիր փուղը տանը մնայ. աղջկերանց պատուեցնենք..

ՆԱՏՈՅ.

Իմ ծծերը խփած է վրա անում էդ բանին․․ վերջը դուն էլ կու հանես․․․

ՍԱՐԳԻՍ.

(Թաքուն) Էդ է․․․ձեր ծծերուն վար հատանք, աշխարքը կու շինուի․․ (Բարձր) Իս էլ կու ճանչնամ․ խիստ լաւ տղայ է․․

ՆԱՏՈՅ.

Երանի՜կ չէնի էն օրը, վար իմ Կեկելը վիզիս գայ մեր տուն չինաձեւի կնիկ դառած, ու պօշլուղով մանգայ իր սիրուն մարդու հետ բուլվարումը․․․

ՍՕՎԱՆԷ.

Յամինքը ինչ էք տալի․․․ էլ հեռ գնելու վախտ չկայ․․․ բարկենդանքն էլ իրեք օր է մնացել․․․ մէ օքին կանչեցէք, բամբիրը գըրենք, խմում իս ու սարուն Ալազան կու տանինք տղէն շանց կուտանք նուխաւուն, ու վարդի վար կու նշենք, կու բերենք տղէն վար աղջկան տէհնի․․․

ՄԵԼՔՈՅ.

Լա՛ւ կուլի․․․ ինչ անիմ․․․

ՆԱՏՈՅ.

Բիձո․ (տանն է մանում ծառան) Գնա՛ մեր Գարպային կանչէ․․․ ասա՛ դէգիդէգ խնդրում է էս նուաւին գաս, ու մէ թարախայ թուղթ, զալամ ու թանաքամանն բերիս հետդ․ (ծառան գնում է)

Աղջկան տէհնիկը մեր տանը չինի․․․ հարիմնիր ունինք, դիփ կու խմնան․․․ չիմ ուզի․․․ թո՛ղ լաւը դուզը․․ ես ու իմ աղջիկը կէհանք Բէգլարինը համ ուրիլու սահաթը չուրսին. դուք էլ տղէն բերէք էնդի․․․ թէ կու հաւնի, էնդաղէն կու բերիս կալի չաու վրա․․․

ՍՕՎԱՆԷ.

Էնո՛նց շատ լաւ կուլի․․․ Ա՛յ թուղթն էլ բերին․․

ԳԱՐՈՅ.

(Ներս մտնելով) Ի՞նչ խաբար է, ընչի՞ էք էտո՛նց թահլթի կանչում ինձ․․

ՆԱՏՈՅ․

Գարօ ջան․ լաւ խաբրներ ունինք․․․ ամա հէ՛նց քու արեւը կու սիրես, մեր մէջը մնայ․ ․Կէկէլին նշնում ենք․ թէ բանը գըլուխ կու գայ, խոսա լաւ․ թէ չէ՛ ու․․․ քու երեսի փուրը գցէ․․․

ԳԱՐՈՅ․

Լաւ է, ուրախ եմ․․․ մաշբամ ումնէք տալի․․․

ՆԱՏՈՅ․

Իմ ում կօսիմ, գենացվա՛․․․ դուն հիմի նստէ, Կէկէլի բաժինքը գրէ, վօնց վուր ես քէզ կօսիմ․․․

ԳԱՐՈՅ․

( Նստելով սեղանի մօտ ) Բարի սահաթի ըլնի․

ՆԱՏՈՅ․

Գրէ՝ էրկու քսան տասը թուման Նիկօլայ մանէթ փող․

ԳԱՐՈՅ

Նիկօլայ մանէթն էլ ի՞նչ է, ամա 50 թուման էլ՞․․․

ՆԱՏՈՅ․

Հա՛, լաւ է, վօնց վուր կարգն է գրէ՛․․․

ԳԱՐՈՅ․

Գրեցի․․․

ՆԱՏՈՅ․

Մէ ձիուք թաղի տախուայ դամա գերիա, երա զառ դօշով, զառ գոտով, ճակտի ադլխով, չէքիլ վ․․․

ԽՕՎԱՆԷ

Էդ վօ՞նց էք գրում․․․ հա՛ա հա՛ա գրեցէ՞ք, վուր իմանանք, թէ ինչ թաւուր բաներ են․․․ էգեբայ դուք մէ մէ արտասնուց իմքնիր էք տալի․․ մի՞ղքը չէ՛ ինիղձ տղէ՞ն․․․ էգուց նուրերը կարէ՞․․․

ՆԱՏՈՅ․

Զէ՛, գենացվա․․ ընչի՞ կու զըրնիմ իմ օղջկան․․․ նրա առել

ով ունիմ… մաղրամ աղէն պխխա ասի, վուր հարևէի մէ-
կէլ օրուայ հաշմ միլիոն դէլրաշուն ինքը կորել տայ…

ԵՕՎԱՆԷ.

Ընչի՞ հօսէ… ասինք, թէ նա ինքը կարի չէ… նրա վայ Աստուծը խոմ կա՞ր է… նա միւրշանց կանայ կաէրկու օրու-մը գերեայ հաշնի… գո՛ւք պխտէք տայ…

ՆԱՏՈՅ

Լաւէ, լաւէ, Եօվանէ ջան մի ջիգրուի, կուռամ… զրբէ, Գաւ-րո ջան…

Մէ ձիաք կողինք, երկու ընհեր, չուրս դզթուգէ բալիշ, եր-կու չարսաւ միշխխանով կարած…

ՍԱԳՈՅ.

(Եօվանէի ականջումը) Գալըութինն ինանում, խաչը գիտենայ, աղէն էլ միղքէ, աղջիկն էլ…

ԵՕՎԱՆԷ.

Աղջիկան ընչի՞ չէք կանչում… թուղ նա էլ գիտենայ, թէ ինչ էք տալի…

ՆԱՏՈՅ.

Ի՞նչ կօնէ… մենք մեզ ու մեզ ռեփրու լաւ կու գրինք… մաղրամ վուր ասում էս, թուղ նա էլ գիտենայ։ Քօծ, Կեկելին կանչէ…

(Կեկելը տանէ մտնում. գլուխ է տալի և նստում է իրա մօր մօտ. Եօվանէն ու Սագօն ուրխ են կանգնում և յետոյ նստում են։)

ՍԱԳՈՅ.

(Եօվանի ականջումը) Ախրաս աղջիկը վուր ջուրն ինգցում.

ՆԱՏՈՅ.

Ի՞նչ է ասում…

ԵՕՎԱՆԷ.

Վոննչինչ, ինձ հիտ մէ սրտի հեսաբ ունէ, էնդու համա փը-սալեցնում է… (Սագոյին) ինչ համբաքելնիր էս անում… ձէնդ կտրէ, մի՜ նըսգի…

ՆԱՏՈՑ·

Գիրն, Գաբոյ ջան՝ իրեք ձեռք շապիկ, ու շապկի····

ԽՕՎԱՆԷ·

Ախար էդ ի՞նչ թաւուր էք գրում··· ինչէ՞մն է շապիկնե-րը··ան··

ՆԱՏՈՑ·

Ի՞նչ անիմ, գեթադվա··վունց վուր մեր քաղքի ադաթն է, էնէնց կուլի···

ՍԱԳՈՑ·

Իմ քուր, քաղքի ադաթնիրը փոխվիլ են··· հիմի դիփ պլատնոյ է···

ՆԱՏՈՑ·

Լաւ է, լաւ է···իրիքն էլ պլատնոյ գրէ···

ԽՕՎԱՆԷ·

Գիտես՝ իմ քուր Կեկել··· էտունք դուն պիտիս ղաբուլ անի ու քու կամքովը պիտի գրուի··· հաքնողը դուն պիտիս ըլնի··

ԿԵԿԵԼ·

Հա, դէդի··ղուրդ է ասում·ի՞նչ կօնիք գրիլը··իս գիտիմ, վուր վունց դուն, վունց իմ մամէն ինձմէն բան չէք խնահի··· իս ինքս իմ կամովը կու դարսիմ··առաջ ջէր տղին տէհնինք··

ՆԱՏՈՑ·

Լաւ է, վուրդի··Գաբոյ ջան, էդ թուղթը պատռէ···

ԽՕՎԱՆԷ·

Գնանք, Սագոյ, էնէնց ասինք տղին· իժում 4 սահաթին տանինք բեդլայինը, տէհնինք կու հաւնի՞, թէ չէ···

ՆԱՏՈՑ·

Վո՞ն էկայրերայ··· էսթաւուր աղջկան ո՞վ չի հաւնի··

ԽՕՎԱՆԷ·

Իս ի՞նչ գիտիմ··· աչք է, ու չը հաւնից·իս ի՞նչ մեղ ունիմ··

ՆԱՏՈՑ.

Ո՞վ է տեսում… Թող տեհնի, տնտղէ, թէ կուզէ մազերն էլ տնտղէ…

ԵՕՎԱՆԷ. ⎫
ՍԱԳՈՑ. ⎭ Մնաք բարով. (Դուրս են գնում)

ՆԱՏՈՑ.

Գնա՛, Կէկէլ, շուրդ հաքի, դլուխդ կապէ… վո՞ւր չիքիլէն կու ծածկիս…

ԿԷԿԷԼ.

Կարովլէն կու ծածկիմ…

ՆԱՏՈՑ

Մէ պստի երեսդ էլ հէդ սրբէ… ես էլ գնամ չիքիլէս փոխիմ, իժում կուգամ քիզ ղուքելու… ղէնուլէնդ էլ հաքի…

ԿԷԿԷԼ.

Ախ, դէդի, ղէնուլէն չէ… կրինոլէն, կրինոլէն.
(Դուրս են գնում)

(Վարագոյրը ծածկւում է:)

ՏԵՍԻՐԱՆ Ե.

Թատրոնի բեմը ցոյց է տալի Բեդղենեմի գալավանը.

Մէկ կողմից ՆԱՏՈՑ և ԿԷԿԷԼ, միւս կողմից ԿԱՐՆԵԻՍԿԻ, ԵՕՎԱՆԷ և ՍԱԳՈՑ.

Նատոն և Կէկէլը համբուրելով եկեղեցու պատկերը ծանր ծանր անցեն կենում Թատրոնի բեմի վրայից և Թաքուն Թաքուն մտիկ են տալի Կարնեւսկուն… Կարնեւսկին նմանապէս ծանր անց կենալով մօտից տնտղում է աղջկան:

ՆԱՏՈՑ.

(Աչքի տակով մտիկ տալով) Հորէ՛ն, գալիս է. քա՛, ի՞նչ պետլած տղա՞յ է, ո՞վ գիտէ քանի տարեկան էլ չլնի… սուրբ բեդղեա-

ինի Աստուծածին, դուն լաւ աչքով շանց տաս: Քօծ, կաւլքնիրդ դրատէ...

ԿԷԿԷԼ.

Ա՜խ, ինչ ջահիլէ, ինչպէս սիրուն է... սուրբ Աստուծածին, լաւ աչքով տեհնի... էնդգամ փռաղեցրիր, դէդի, վուր մոռացայ ակռի աղջիկը ծուցս էի դրի...

ՆԱՏՈՅ.

Ակռի աղջիկը ինչ կօնիս...

ԿԷԿԷԼ.

Բաս չիս գիտի, վուր աղջկերքը ուրուքին գնալուս ծուցըն ին դնում խաղալու թղթի ակռի աղջիկը... Հեատի զուրաւուր բան է, վուր չէլած...

ԽՕՎԱՆԷ.

Նու, շատ. Նրա՞մխտանայ. (1)

ԿԱՐՆԵԽՍԿԻ.

Да, она хороша, молода, мнѣ очень нравится. Остановимся, какъ будто смотримъ на городъ; я хорошенько посмотрю на нее. (2)

ԽՕՎԱՆԷ.

Սագօ, փաղէ նրանց խմաց արա, վուր մէ պստի կանգնին դէնը, միթամ քաղաքին ին մտիկ տալի...

ՍԱԳՈՅ.

(փաղում է Նատոյի մոտ) Տղէն էնդի կանգնեցաւ, ուզում է մէ պստի էրկար տեղի. դուք էլ մէկէլ կռնէն կանգնեցէք... միթամ քաղաքին էք մտիկ տալի... (Երկու կողմից կանգնում են. Սագօն գալիս է իր տեղը)

ՆԱՏՈՅ.

Էրեւի հաւնում է, վուր խուրը խուրը մտիկ է տալի... ինձ

---

(*) Հէ... ինչ ես ասում... հաւնում ես...

(**) Հա... սիրուն է, ջահիլ է... ես շատ հաւնում եմ... կանգնենք, որպէս թէ քաղաքին ենք մտիկ անում, ես մէ լաւ կը տեսնեմ նրան...

վրա էլ լաւ աչքավէ մտիկ տալի․․

ՍՕՎԱՆԷ։

Կակօյի խարօշի դէվկա, վէդիշ (1)

ԿԱՐՆԵԻՍԿԻ։

Да, она просто красавица. (2)

ՍՕՎԱՆԷ։

Բուդիշ լուբիտ, ի օնա բուդէտ լուբիտ․․․ սմօտրի կակօյի նաշ գօրօդ Տիֆլիս․ օհ, օհ, օհ, կակօյի գօրօդ․ (3)

ԿԱՐՆԵԻՍԿԻ․

Да, отсюда можно все видѣть. (4) (Ինքը մտիկ է տալի աղջկան)

ՍՕՎԱՆԷ․

Վօտ էտա Քուրա, էտօ Թամամշեվա քարվանսարայի․ էտօ Աւլաբար, վօտ տամ դալօկայ դալօկայ, տվօյի նեմեցկա դօմ․․ (5)

ԿԱՐՆԵԻՍԿԻ․

(Աղջկան մտիկ տալով) Вижу, вижу, братецъ. (6)

ՍՕՎԱՆԷ․

Ա՛ էտօ վէդիշ․․․ (7)

ԿԱՐՆԵԻՍԿԻ։

Что? (8).

ՍՕՎԱՆԷ․

(մատները շանց տալով) Է՛տօ․ (9)

---

(1) Ինչ լաւ աղջիկ է․․ տեսնում ես․․․

(2) Հա՛․․․ շատ գեղեցիկ աղջիկ է մէկ խօսքով․․

(3) Դուն կու սիրես նրան, նա էլ քեզ կու սիրէ․․ տես ինչպէս քաղաք է մեր Թիֆլիսը․․ օհ, օհ, օհ, ինչ քաղաք է․․

(4) Հա՛․․․ էստեղայ կարելի է ամէն բանը տեսնել․․

(5) Այս՛ն էն Քուռն է, էն Թամամշովի քարվանսարէն է…էն Հավլաբարն է․․ անա՛ էն հեռույումը, հեռույումը քու նշանածի տունն է․․․

(6) Տեսնում եմ, տեսնում եմ, աղբէր․․․

(7) Իսկ էս տեսնում ես․․։

(8) Ի՞նչ․․․

(9) Էս․․․

ԿԱՐՆԵՒՍԿԻ·

Вижу, вижу, братецъ. (1).

ՍՕՎԱՆԷ·

Ցօտօ· սմատրի խարաշէնկա, պօշէնէ սկաժի չտօ նէ վիդալ·(2)

ԿԷԿԷԼ·

(ժպտելով մօտիկ է տալի տղին·) Փառք քեզ Աստուած· իս տեհնումիմ, վուր ինձ խիստ լաւ աչքով տեհաւ···ինքն էլ խիստ լաւ սրտի տէր է երևում· գնանք, դեղի, հէրիք է, խալխը վարավուրդ կօնին·(սկսում են գնալ)

ՍՕՎԱՆԷ·

Տեղէր պախդօմ (3) (Սկսում են գնալ։ Կէկէլը և Նատոն կանգնում են բեմի ծայրումը, իբրու թէ շրջելը դրանելու համար· կարճևօլըն մէկ էլ մօտիկ է տալի սղլիան և չուրս է գնում· Սօվանէն վազելով գալիս է Նատոյի մօտ և սառում է՝) Խիստ հաւնեց, աչքներդ լուս· գնացէք տուն, չոր հաղիր արէ.ք· էս է մինք էլ գալիս ինք· մամինքն էլ հաղիր ունէ պահած··(Վազելով համնում է կարճևօլու եաևից և դուրս է գնում։)

ՆԱՏՈՅ·

Փառք քեզ Աստուած, վուր հաւնից··իժում ինչ պետլած տղա՛յ է···Մինք վուտով գնալ չինք կանայ, կ'ուշանանք··այ հօրէն դրօշկայ է գալի··· դրօշկի· դրօշկի··· (Բեմի եաևից դրօշկապանը՝) Куда прикажете? (4)

ՆԱՏՈՅ·

Աւլարա՛, ուգալթի՛ն·(5)

ԴՐՕՇԿԱՊԱՆ·

Какъ можно, пол.—абаза? Этакую даль—то? Абазъ возьму. (6)

---

(1) Տեսնում եմ, եղբայր, տեսնում եմ···

(2) Էն է, լաւ մտիկ տու··յետոյ չասես, թէ չտեսար···

(3) Չիմա գնանք··

(4) Ուր կու հրամեյէք···

(5) Հալարամ, 10 կօպէկ արծաթ···

(6) Ինչպէս կարելի է 10 կօպէկով···էս քան հեռու տեղը···20 կօպէկ կառնեմ··

Ն Ա Տ Ո Ց.

Հօւղիմ քու՝ գլուխը... քու աչքն էլ տրաքի, քանի խօ քիզ աբաւէք չտամ... չէ, դէդի, վուտով գնանք...

Դ Ր Օ Շ Կ Ա Պ Ա Ն.

Что же? Не хотите?... Знать больше полъ—абаза и денегъ—то нѣтъ? Эхъ, вы барыни, барыни. Ишь нарядились? Словно, куклы какія. Право, слово. (1)

Կ Ե Կ Է Լ.

Լաւ է, դէդի, տու մէ աբասի... վուտով խնչկլէ տուն կու հանինք, պօլսապօծկէքս էլ կու փչանան, նրանք էլ միզմէն առաջ կու հանին...

Ն Ա Տ Ո Ց.

Լաւ է, աչքումը կենայ... էյ. դրօշկի, պօստոյ, պօստոյ...

Դ Ր Օ Շ Կ Ա Պ Ա Ն.

То—го, постой. Знать расчитали.... (2)

Ն Ա Տ Ո Ց.

Աչաշին հիդ գծիլ տու, գէրիէդ խարաբ չանէ. փիշերքդ հաւաքէ...

Դ Ր Օ Շ Կ Ա Պ Ն.

Ну, голубчики, трогай. ... (3)

(Վարագոյրը ծածկւում է)

---

(1) Ինչ է.. չէք ուզում.. Երևի թէ 10 կոպ՝էկից աւելի փող էլ չունիք... Էյ աղջիկ պարոններ, աղջիկ պարոններ.. տես ինչպէս են զուգուել... հենց գիտենաս տիկնիկներ են...

(2) Է՛հ է որ... երևի հաշիւը գտաք...

(3) Էյ, աղաւնի՛ներ... դէ՛...

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

*Թատրոնի բեմը ցոյց է տալի Մելքոյի տունը.*

ԿԷԿԷԼ. *յետոյ* ՆԱՏՈՅ, ՄԵԼՔՈՅ, *վերջումը* ԿԱՐՆԵԻՍԿԻ, ԵՕՎԱՆԷ *և* ՍԱԳՈՅ.

ԿԷԿԷԼ.

*(Մենակ տուն գալով երգում է).*

Չինովնիկի կնիկ կուլիմ,
Լաւ գըքսիր իս կուննում.
Միրուն մարդուս կռնէն բռնած,
Իս պօդրուչկով ման կուգամ:
Միր հարեւան աղջկերքը
Ջըկրու ճիճինի կուգան.
Մեծարքումը, կամպանիումը
Իս բարձր տիղ կուննում:

ՆԱՏՈՅ.

*(Տուն մտնելով)* Էլ ի՞նչ ասիմ...հեստի տղայ է, վուր քու աչքն էլ կու հաւնի..ջահիլ, սիրուն, պետղած..չիներով լիքը..

ՄԵԼՔՈՅ.

*(Նրա ետևից տուն մտնելով)* Վո՞ւնց թէ չիներով լիքը...Եօվանէն չէ՞ր ասում, թէ մէ չինն աւել չունէ՞...*(ամենքը նստում են)*

ՆԱՏՈՅ.

Ի՞նչ իս խօսում, քու խոմ չէ՞ր...մէ չին վօրտնեկի վրա ունէր..էրկու չին ուսերքի վրա ապալէթներումը...վից չին դօշին ունէր շարած, ու չէքմէքի վրա էլ էրկու չին ունէր..շըխշըխկալի ման էր գալի, դուն ասիր...

ԿԷԿԷԼ.

Ամո՞ւթ չէ, դէդի, վուր էդ էլ չիս գիտի՞..էտունք դիփ մէ չին է..խօսքը ապալէթների միխերն ին...էնդով կու իմացուի, թէ քանի չին ունին...

ՆԱՏՈՅ.

Ձի՞մ գիտի, դէդի ջան...միր վուխտը էսունք չէինք գի-

տի․ կնիկս էկել էր պառուել էր, ջէր էլ չէր գիտի․․․ ամա հիմիկուայ աղջիկերքը գիտի գիտին․․(կարնևսկին, Եօվանէն և Սաքոն տուն են մտնում. Մելքոն, Նատօն և կէկէլը ոտքի են կանգնում):

ԿԱՐՆԵՒՍԿԻ.

(Մօտենալով գլուխ է տալի) **Честь имѣю рекомендоваться.. Прапорщикъ Карневскій.** (1)

ՄԵԼՔՈՆ.

Ի՞նչ է ասում․․․

ԵՕՎԱՆԷ.

Ասում է՝ ես քու աղջկան հաւնում եմ, խնդրում եմ, վուր ինձ տաս․․

ՄԵԼՔՈՆ.

Ջէր մէ նստեցէք, մէ խօսինք, մէկմէկու տեհնինք․․․

ԵՕՎԱՆԷ.

Օ՛ն գավարիտ, օ՛չէն պրիյատնօ ստարօ՛ի զնակօ՛մ բուլ․ պրօ-սիտ սեստի․ (2) (Բոլորը նստում են)

ՄԵԼՔՈՆ.

Վուրց վուր միզ հասկացրիր, թէ դա ով է, դրան էլ հասկացրի՞լ ես, թէ մինք ով ենք․․

ԵՕՎԱՆԷ.

Վ՞ուրց չէ․․․հասկացրել եմ․․

ՄԵԼՔՈՆ.

Դրան կասիս, վուր խարակների ուստաբաշու ախպէրն եմ․ պատի մարդ չգիտենայ միզ․․․

ԵՕՎԱՆԷ.

Վօ՛տ գասպադի՛ն ակինցա՛ր․ օն գաւարի՛տ, չտօ օն բաշմաչ-

---

(1) Պատիւ ունիմ ծանօթանալ—ես եմ Պրապորշչիկ Կարնևսկի․․

(2) Նա ասում է, թէ շատ ուրախ է ձեզ հետ ծանօթանալու, և խնդրում է որ նստիք․․

նիկոլ ուստաբաշա աղսակալ․ (1)

ԿԱՐՆԵԻՍԿԻ․

Что это значитъ: Устабашъ, Асакалъ? (2)

ԽՕՎԱՆԷ․

Էտօ զնաչիտ․․․ (3)

ԿԱՐՆԵԻՍԿԻ․

Да, впрочемъ мнѣ все равно, кто бы онъ ни былъ. Мнѣ нравится его дочь и я прошу ея руки. (4)

ԽՕՎԱՆԷ․

Ասում է՝ ես շատ լաւ հասկանում եմ, թէ ինչ է նըշանակում Աղսաղալ, ու հենց էտու համա է, վուր ցանկանում եմ քու փեսայ դառնալ, ու քեզ հետ բարեկամութին գցել:

ՄԵԼՔՈՑ․

(Ուրախանալով վեր է թռչում տեղիցը) Թէ վուր էտէնց է, ես էլ ինչ ղըդամ ջանումս ջան կայ չալիշ կուգամ դրան հէրութին անի․․․դրուստն եմ ասում, չէի ուզում ուրիշ հասնի օմքնու աղջիկ տայ, ամա դա խիստ դուր եկաւ ինձ․․․

ԽՕՎԱՆԷ․

Տէհա՞ր, վուր ասում էի, թէ կուհաւնիս․․․ Հիմի վուղի բա՞նը վունց կուլի, ի՞ր կուտաս․․․

ՄԵԼՔՈՑ․

Իր էկեղեցեմէն հիդ կուգան, էն նոմուսին վաղըրը կուհամբրիմ․․․

ԽՕՎԱՆԷ․

Զէ՛, էտէնց չէ ․․․ ես վունց վուր քեզ մօտ չեմ ուզի սև

---

(1) Այո՛, պարոն օֆիցեր, սա ասում է, թէ խարաղներու ուստաբաշու օգնականն է:

(2) Էդ ինչ է նշանակում՝ Ուստաբաշ, Ասակալ․․

(3) Էդ նշանակում է․․․

(4) Մնա․ ինձ համար բոլորը մէկ է, ով կուզէ ընի․․․ Ես հաւնում եմ սրա աղջիկը և խնդրում եմ նրա ձեռքը:

էրէս հայ, էնէնց էլ սրա մօտ···դուն փուղը կուտաս զա-
ռափ Գիգոյին, թուղ նա բերէ էկեղեցին ··· հէնց ինչպէս
վուր քահանէն զգաստած մօտ գայ ու սկսէ պսակելը, Գիգոն
փուղերը պահ տայ սրա շալվարին, ես էլ տէհնիմ··

Մ Ե Լ Ք Ո Յ·

Լա՛ւ կուլի, թուղ էնէնց ըլնի···

Կ Ա Ր Ն Ե Ի Ս Կ Ի·

**Что онъ говоритъ?** (1)

Ե Օ Վ Ա Ն Է·

Օ՛ն գուարիտ, չտօ վի օչին պօնրավիլ ի եմու, ի ժենու, ի
դօչկու, ի···(2)

*Էս խօսքի վրա Կարնեսկին վեր է թռչում տեղիցը, գնում է Նատոյի մօտ. ուզում է ձեռքը պաչ անի, Նատոն քիչ քաշվում է, բայց Կարնեսկին բռնում է ձեռքը և պաչ է անում. յետոյ ուզում է կեկելի ձեռքը պաչ անի. նա վեր է կենում տեղից և ուզում է փախչել. բայց Կարնեսկին բռնում է նրա ձեռքից և պաչ է անում. նա էլ նրա երեսից··. Էդ միջոցումը Մելքոն զարմացած աշխատում է մէջ ընկնել, առաջ իրա կնկան, յետոյ աղջկան պաշտպանելու համար. բայց չի համնում. զարմացած կանգնում է. Կարնեսկին վրայ է ընկնում և սկսում է նրան փաթըթուել և համբուրել... Նա ազատուելով նրա գրկից ձայն է տալի պօստօյ, պօստօյ, ռուսօ. Եօվանէն և Սաքոն ծիծաղում են. Յետոյ Կարնեսկին գալիս է նստում է իրա տեղը···*

Մ Ե Լ Ք Ո Յ·

Գժուեցա՞ւ էս օխնածը···ինչ հօրս ցա՞ւը պատահեցաւ
դրան···սատանայ մտաւ փո՞րը···

Կ Ա Ր Ն Ե Ի Ս Կ Ի·

**Что онъ говоритъ?** (3)

Ե Օ Վ Ա Ն Է·

Օ՛ն գուարիտ, վի օչէն դօբրի չալավէկ·նօ ունաս նէտ նէ-

---

(1) ինչ է ասում…

(2) Նա ասում է, թէ դու շատ դուր ես գալի իրան էլ, իրա կնկան էլ, իրա աղջկան էլ, իրա…

(3) ինչ է ասում…

մեստա պօջալուստա·· (1)

ԿԱՐՆԵԽՍԿԻ·

Что за бѣда? Я не зналъ вашихъ обычаевъ. Впрочемъ, кажется, я ничего неприличнаго не сдѣлалъ... (2)

(Ծառան չայ է բերում).

ՄԵԼՔՈՅ·

Համեցէք չայ անուշ արէք··
(Ամենքը վեր են առնում չայի բաժակները.)

Աղջամթը խէր ընի էս չային, վուր չուստ էկաւ···թէ չէ էս օյնածը մէկ էլ կը գլուահարուէր ու կրախէր գլխունամըս պաչ անել···Ա՛ կնիկ քի՞զ էլ պաչ արա՞ւ··

ՆԱՏՈՅ·

(Ծիծաղելով Չէ՛, ի՞նչ ես խօսում··հէստի քաղաքավարի ձեռըս պաչ արաւ, վուր էլ չի ասուի···

ՄԵԼՔՈՅ·

Չէ՛, ամըէր· դրան ասէք, վուր էտէնց քաղաքավարութին իմ կնկայ հետ չը բանեցնէ···իրա կնկան ինչքդա ուզէ պաչ անէ···ո՞վ է նրա ձեռքը բռնողը··մադրամ իմ կնկան ձեռը չտայ, հեռու կէնայ···մեր փալքումը էտէնց բանիր չինք գիտի···

ԿԱՐՆԵԽՍԿԻ·

Что онъ говоритъ? (3)

ԵՕՎԱՆԷ·

Ո՛ն գաւարի՛տ, չտօ կաղդա՛յ ավո՛յի ժենխոսկայ բու՛ղիտ, նա դրուգօ՛յի դէն սմա՛տրայ օն դաստ խարօ՛շի բալ, ի տօղդայ մի զնակօ՛մ բուդի՛շ վօտ զնակօ՛մ····(4)

---

(1) Նա ասում է, թէ դուք շատ լաւ մարդ էք· բայց մեր փարքումը կարգ չէ նորահարսին պաչ անելը·«...

(2) Ինչ վնաս կայ էդամը...ես չէի գիտի ձեր սովորութիւնը··բայց՝ կարծեմ որ ես ոչինչ անվայելուչ բան չեմ արել··

(3) Ինչ է ասում...

(4) Սա ասում է, թէ երբ որ կու պահես, հարսնիքից մինս օր նա լաւ ձենծապք կանչի և էն ժամանակը ամէն բարեկամների հետ կըծանօթանաս.–

ԿԱՐՆԵՒՍԿԻ.

(Գլուխ տալով) Очень радъ. (1)

ՄԵԼՔՈՑ.

Էլ չեմ անի, հօնէ՞...

ԵՕՎԱՆԷ.

Հա...

ՄԵԼՔՈՑ.

Խօրօ՛շ, խօրօ՛շ... (2)

ՆԱՏՈՑ.

Գդէ՞ ժիվօտ (ծիծաղելով) (3) Ի՞նչ անեմ. լաւ ռուսվար էլ չեմ գիտի ու...

ԿԱՐՆԵՒՍԿԻ.

Животъ?...Какъ, гдѣ животъ? Неужели она не знаетъ? (ցոյց է տալի իրա փորը) вотъ онъ. (4)

ՆԱՏՈՑ.

(Բարկանալով) Ի՞նչ է փորը շանց տալի լրպստածը...

ԵՕՎԱՆԷ.

(ծիծաղելով) Բա ի՞նչ անէ խեղճը.. դուն հարցրիր, թէ փօ՞ր-դի է փորը, նա էլ շանց էրիտ..

ՆԱՏՈՑ.

Ես ի՞ք իմ հարցրի փորը... քու խոմ չի՞մ... ի՞նչ կօնեմ նրա փորը.. ես հարցրի, թէ փօ՞րդի է կենում.. մէ դուն ա-սա, թէ Աստուծ կու սիրիս...

ԵՕՎԱՆԷ.

Օ՛ն դաւարիշ: գդէ՞ տվօյի փաթէր...(5)

---

(1) Շատ ուրախ եմ..
(2) Լաւ է, լաւ է...
(3) Ուր է փորը (փոխանակ ասելու՝ կամ ժիլեօտէ՝ որտեղ էք բնակւում:)
(4) Փորը.. ինչպէս թէ՝ ուր է փորը.. միթէ չի գիտի.. ահա..
(5) Նա ասում է՝ ուր է քո կացարանը.

ԿԱՐՆԵԻՍԿԻ·

А... квартиру спрашиваеть? Въ собачьей деревушкѣ, въ домѣ унтеръ—офицера Пахомова. (1)

ԽՕՎԱՆԷ·

Շան Թաղումն է կենում...

ՆԱՏՈՑ·

Վո՞չ քուանամ ես ու կուրանամ... գանա իմ Կէկէլին ըլ-տի շա՛ն Թաղումը պահի՞...

ԽՕՎԱՆԷ·

Յաս ի՛նչ... վուրդի ինքն է կենում, էնդի էլ իր կնկան կու-պահէ ... Թէ չէք ուզի, հարմնիքը ձեր տանը արէք, իժում մէ շաբաթ էլ ձեր տանը պահեցէք, ու ինքներդ տուն ճարեցէք նրանց համա ան հաւլաբրումը, ան քաղքումը...

ՆԱՏՈՑ

Հա՛, վուրդի, էտէնց կընինք... վուր գիտենամ Թէ տարը տարի էլ պահելու կուդառնան, շան Թաղը տանելու աղջիկ չեմ տայ...

ԿԱՐՆԵԻՍԿԻ·

Что она говорить? (2)

ԽՕՎԱՆԷ·

Անի տերէ ժալմիտ Միօզօ մէտ իգուլմա· (5)

ԿԱՐՆԵԻՍԿԻ·

Жить—то не знаю, сколько придется, а пока буду живъ, за гуляніемъ дѣла не станетъ. (4)

ՄԵԼՔՈՑ և ՆԱՏՈՑ·

Ի՞նչ է ասում·

---

(1) Ա՜.. կացարանն է հարցնում... շան Թաղումը, ունտեր օֆիցեր Պախոմովի տանը...

(2) Ինչ է ասում...

(3) Նրանք ցանկանում են, որ շատ ապրես և քէֆ անես..

(4) Ապրելը չեմ գիտի ինչքան կու ապրեմ, բայց քանի որ կենդանի եմ քէփը չեմ պակասցնի..

ԽՕՎԱՆԷ.

Աստուած է՛ հեռու պխտիմ պահի ձիր աղջկան, վուր էրնէկ տալու ընի, դլխի գուլամթներումը ման կօծիմ, կօսէ.

ՆԱՏՈՑ.

Հա՛, փեսայ ջան, հա՛, քու ջանին մեռնիմ...հեռու նեժնի պահած աղջիկ խմ տալի ջիգ, վուր դէզի մէկ ու ճարէ.. հիմի դրանը գուն, քունը Աստուծ...

ԿԱՐՆԵԽՍԿԻ.

**Что она говоритъ? (1)**

ԽՕՎԱՆԷ.

Ա՛նա գաւարիտ, կօգդա ժէնիսեայ բուդիշ էսօ կրէպկօ լուբի ժէնա, խարօշի պլանի չէի (2)

ԿԱՐՆԵԽՍԿԻ.

**Не безпокойтесь, все будетъ хорошо. (3)**

ՄԽԼՔՈՑ.

Հարսնիքը ե՞րբ անինք.

ԽՕՎԱՆԷ.

Էդուց էվէտ...դուք ձիր բանը պրծէք, խ էդուց առուտէհան կուգամ.

ՆԱՏՈՑ.

Լա՛ւ կուլի, վուրդի, էդուց էվէտ վրա կուքերինք..դուշմաննիր շատ ունինք..ո՞վ գիտէ.չէհան փուղը հաւելցնին ու...մարդինք..

---

(1) Ինչ է ասում..

(2) Նա ասում է՝ երբ որ կու պսակուիք, դայմ սէր՝ կնիկդ, լաւ չարքի կայնէ.

(3) Մի՛ նեղանաք, ամէն բանը լաւ կուլի..

ՍՕՎԱՆԷ.

Իս էլ էն իմ ասում դա՞ ...

ԿԱՐՆԵԻՍԿԻ.

(վեր է կենում և գլուխ է տալի կէկէլին.) **До свиданья, Кекела Мелконовна.**
(1) կէկէլը կնիկսին է անում.

ԿԱՐՆԵԻՍԿԻ.

**Ого? она киксенъ умѣетъ дѣлать? Вотъ неожиданно напалъ на образованную дѣвицу. (2)**

ՍՕՎԱՆԷ.

Կա՛կժէ. քու հօրն օղորմի... գիժի կնիկսով լեքը չէ՞ մեր Հավլաբա՞րը... անա՛ նեմնօժկօ ի պարուսկի գնաւա շալթայ, բալթայ. Ի ուժ լեզգինկա խըրաւա, դախրա, թիպլեպլիտայ, օ-չին խարաշօ գնախա... աբօնէ ժէնիցա, պօրտուպեան, մօր-տուպեան, տանցի, մանցի, սամ բուդիշ ուչիշ... (3)

ԿԱՐՆԵԻՍԿԻ.

**Она у меня чрезъ годъ будетъ прекрасною дамою. Прощайте.**
(Ուզում է գնա) (4)

ՆԱՏՈՑ.

Եօվանէ ջան, հենց տպրես, էնէնց արա, էդէրայ հիմնակե-վետ մէ նշան դջվինք...

ՍՕՎԱՆԷ.

Գապօտելին ափիցար, ըղէլցի դա, կակ եայ ուբէ ակազալ..(5)
կարնեսկին մօտենում է կէկէլին, հանում է իր մատից մատնիքը, դը-նում է կէկէլի մատին և պաչ է անում ծեղից... Ամէնքը ձէն են տալի Աստուծ շնորհաւոր անէ, Աստուծ շնորհաւոր անէ.. կարնեսկին

---

(1) Մինչև 'ի կրկին տեսութիւն, կեկէլա Մելքոմեանին,

(2) Օհօ.. տեհնումես... կնիկսին էլ գիտէ... խելի յոյս չունենալով, կըր-տառ էկայ... թաժ աղջկայ

(3) Ինչպէս չէ... ամեն փոքր ռուսերէն էլ գիտէ խօսել.. և լեզգինկա խաղալ, պարել, տօմպլեպլիտայ անել՝ շատ լաւ գիտէ... պսակուելուց յետոյ հաշնամուր անել, կարգով ինքդ կսովորեցնես:

(4) Օչըմ իմ ձեռին մէ տարուց յետոյ կըլնի գեղեցիկ տիկին. մնաք բարով.

(5) Պարոն Օֆիցեր-ենպէս սպա, ինչպէս որ ես քեզ տայի;

գլուխ է տալի ամենքին... Մելքոն և Նատոն փաթաթւում են նրանց օրհնելով...

(Վարագոյրը ծածկւում է)

ՏԵՍԱՐԱՆ Է.

*Թատրոնի բեմը ներկայացնում է Մելքոյի սենեակը. Թախտի առաջևը դրած է կոլոլ սեղան. վրէն երկու շամադաններ.*

ՄԵԼՔՈՅ. ՆԱՏՈՅ. *քանիմի հարևան աղջկերք. կանայք և մարդիկ նըստած են աթոռների վրա և թախտի ծէրին։*

ՓԵՓՈՅ.

Վո՞ւր էկեղեցին տարին պսակելու...

ՆԱՏՈՅ.

Սուրբ Կարապետը.

ՓԵՓՈՅ.

Նէտայի մէ դրօշկայ ընէր մինք էլ գնայինք թամաշա...

ՔԵԹՈՅ.

Ի՞նչ կօնես, հորէս կու գան, ով գիտէ պրծել են էլ..

ՓԵՓՈՅ.

Ո՞վ գիտէ ինչգդամ ջահել տղերք են մօտ էլէ...ախ, իմ դէդին ինչ ասիմ, վուր դատուր չէրես..նէտայի գիտենամ թէ ի՞նչ կայ փախնալու...

ԳԱՔՈՅ.

(Տուն մտնելով) Աչ.քներդ լո՜ւս, բարի սահաթի ընի..,

ՄԵԼՔՈՅ

Շնորհակալ ենք..բարով քու թաղն էլ տէհնինք...

ՆԱՏՈՅ.

Գարոյ ջան՝ դո՞ւն ընչի չես նշնւում..

ԴԱՐՈՑ·

Չէ՞ դէդիդայ, իմ բանը չէ… էս ժամանակիս կնիկ պահիլը դժուար բան է…

ՓԵՓՈՑ·

(Թաքուն) Ա՜խ, նէտայի ինձ ուզէ…

Դուռը բացւում է, տուն է մտնում չաֆերը, ասում է՝ Поздравляю васъ съ новобрачными. (1) ձեռին բռնած Թայֆուլը դնում է սեղանի վրա մէջ տեղումը ։

Մելքոն, Նասոն (ձեռին շաքէշով շարբաթ բռնած) և մէկ քանի կանայք վեր են կենում տեղից և գնում են առաջ. Թառրանի բաղի ետևից լսւում են համբոյրներ և շնորհաւորութեան ձայներ. հիւրերը ոտքի կանգնած սպասում են… չաֆերը Թուրը հանած բռնում է դրան վրա. Նորապսակները տուն են մտնում, Նորափեսէն թրով կտրում է Թեփչին, ամէնքը ձայն են տալի՝ Աստուած շնորհաւոր անի, աստուած շնաւոր անի. Նասոն խմցնում է չարբաթը և պաչ է անում, յետոյ Մելքոն է պաչ անում և օրհնելով բերում են և նստեցնում են դահոյքների վրա.. ամէնքը նստում են և սկսում են իրարու հետ խօսել և ծիծաղել. Մելքոն և Նասոն ուրախ ուրախ ման են գալի, հիւրերի հետ խօսում են..

ՄԵԼՔՈՑ·

Շամպանսկին բերէք ·

Ծառան բերում է Շամպանսկի… ածում են, սկսում են մէկ մէկ առաջ գնալ, Նորապսակներին գլուխ են տալի, շնորհաւորում են և խմում են. աղջկերքը պաչ են անում Նորահարսին, գլուխ են տալի Նորափեսին և խմում են ։ Նասոն և Մելքոն կառավարում են ։

ՆԱՏՈՑ·

(Հարսանեներից մէկին) Թադուհի ջան,— ի՞նչ կուլի ղոկիս ձիր դայիրէն ու Նաղարէն բերիլ տաս. մէ պտտի աղջկերքը խաղան.. ի՞նչ անինք, սաղանդար չըճարեցինք, ու մէկ էլ վուր մինծ հարսնիք չուզեցինք անիլ ։

---

(1) Շնորհաւորեմ Նորապսակների ամուսնութիւնը ։

ՔԵԹՈՑ.

Քո՛ծ ; վազէ բե՛․․ ո՞վ կօծէ․․

ՓԵՓՈՑ.

Էստի գլխունանքը ածիլ գետին․․․

ՆԱՏՈՑ.

Ա՛ղջկերք, թէ կուզեք լօտօ բաց անենք․․․

ՓԵՓՈՑ.

Չ՛ինք ուզի․․․ ո՞ւմ դարդն է կորուի էստի թումնիր տանուլ տայ, ու ինչ կլի լուս նստի․․․

(Բերումեն դայիրայ ենադարայ. մէկը վեր է առնում դայիրէն, միւսը նաղարէն դնում է գոգը, մէկէլը վեր է առնում փայտերը.

ՄԵԼՔՈՆ.

(Ականջ է դնում դէպի քուչէն.) Մուլայի տուէք, զուռնի ձէնն է գալի․․․ ի՞նչ լաւ էլաւ գնաց, Մինօն, ձէն տու, թող գան էստի ածեն. ասա մէկ օսկի կու բաշխիմ․․ ի՞նչ լաւ հարսնիք դառաւ.

Զուռնէն բեմի ետևից, դայիրէն ենադարէն բեմի վրա սկսումեն ածել լեկզինկար. սկսում են կարգաւ խաղալ. Նատոն վեր է կացնում աղջկերանցը կարգաւ, Մելքոն տղերանցը. առաջ մէկ աղջիկ է խաղում, յետոյ մէկ տղայ. կարգաւ խաղումեն բաւական երկար... վերջումը խաղում է Նատոն...

ԽՕՎԱՆԷ.

Փա՛ռք աստծու․․․ դէփի լաւ վերջացաւ․․․ իմ ջափէն էլ դարդակ անց չըկացաւ, դուք էլ լաւ փեսայ ճարեցէք․․․

ՄԵԼՔՈՑ.

Շնուրաւոր ենք․․․ հալալ ըլնի քու ջափահաւըր․․․ համեցէք նստի, իրիկնահացէն Մնա, մէ պստի դզենք, իստիլաթ անենք․․․

ԽՕՎԱՆԷ.

Չէ, շնուրաւոր իմ․ ես պիտիմ գնայ, բան ունիմ․․ մեր փեշակն էլ հապէս օրերու է․․․ թէ մէ տեղ նստենք, քեփ անելու, ուրիշ տեղերքը ձեռնեմէս կէհան․․

ՄԵԼՔՈՑ.

Դո՛ւն գիտես․․․ չեմ բռնի․․․ քու զարարը չեմ ուզի․․․

(Նօվանէն գլուխ է տալի գլխտնանցը և դուրս է գնում.)

Մ Ե Լ Ք Ո Յ.

Ածէք էդ զուռնէն, խ կ՚ուզիմ խաղայ... (սկսում են նոր մէկանց ածել և խաղալ.) Մելքոյից յետոյ խաղում են՝ Նատոն, Փեփոն, Քեթոն և ուրիշները հերթով. վերջապէս Կէկէլը: Մելքոն չուտով վեր է կացնում Կարնևսկուն.

Կ Ա Ր Ն Ե Ւ Ս Կ Ի.

**Я не умѣю по вашему. А вотъ, если угодно, я прополькирую съ Кекелою, если она умѣетъ. (1)**

Գ Ա Բ Ո Յ.

Կէկէլ, պօլկայ գիտէս խաղալ.. (Կէկէլը նշանով ցոյց է տալիս, թէ գիտէ:)

Կ Ա Ր Ն Ե Ւ Ս Կ Ի.

**Да, это просто образованная, когда умѣетъ полькировать. (2)**
Կարնևսկին և Կէկէլը խաղում են պօլկայ.

Ժ Ա Ն Դ Ա Ր Մ.

(Տուն մտնելով) **Г. Прапорщикъ Карневскій здѣсь? (3)**

Կ Ա Ր Ն Ե Ւ Ս Կ Ի.

(Գնալով նրա դէմը.) **Здѣсь. Что тебѣ надо? (4)**

Ժ Ա Ն Դ Ա Ր Մ.

(Փակէթ տալով) **Къ Вашему Благородію конвертъ отъ Коменданта. Приказано сейчасъ отправиться со мною. (5)**

Ամէնքը զարմացած մնում են...

Կ Ա Ր Ն Ե Ւ Ս Կ Ի.

(Ռանգը թռած, ձեռքը դողալով բաց է անում փակէթը և կարդում է. Գաբոն նրա ուսազլխիցը կարդում է անձայն և տխրում է...)

---

(1) Ես ձեզ նման խաղալ չըգիտեմ...իսկ եթէ կամիք, ես Պօլկայ կու խաղամ Կեկելի հետ, եթէ նա էլ գիտէ:

(2) Մէկ խօսքով սա լաւ կրթած է, երբ որ պօլկայ խաղալ գիտէ:

(3) Պ. Պրապօրշչիկ Կարնևսկին էստեղ է:

(4) Էստեղ է... ինչ է պէտք...

(5) Ձերդ Բարեծննդութեան փակէթ եմ բերել Կօմենդանտից... հրամայած է էս րոպէս գնալ ինձ հետ:

Մ Ե Լ Ք Ո Ց·

Հալալաթ· Կամանդաւթը զըկել է միր փեսին շնորքներու· տես ի՞նչ պատիւ-ին տալի···

Կ Ա Ր Ն Ե Ի Ս Կ Ի·

(գնում է կէկէլի մօտ, ձեռից բռնում է և ասում է) **Прощай, мы не скоро увидимся.** (1) գդակը վէր է առնում, և դուրս է գնում ժանդարմի հետ...

Մ Ե Լ Ք Ո Ց·

Մէ խմաց արա, Գևորգ ջան, ի՞նչ էր գրած էն թղթումը···

Գ Ա Բ Ո Ց·

Էլ ի՞նչ ասիմ··· տունդ քանդուիլ է, գնացիլ է···էնդի գըրած էր, վուր Թագաւուրական փուղը փչացնելու համա պիտի բերդը գնա···

Մ Ե Լ Ք Ո Ց·

Վա՜յ իմ օրին···էս ի՞նչ բան էլաւ···(կամաց կամաց թուլանալով ընկնում է աթոռի վրա):

Ն Ա Տ Ո Ց·

Քոռանամ ես, ու կուրանամ·էս ի՞նչ բան էկաւ իմ գլուխը· (կամաց կամաց թուլանալով ընկնում է թախտի վրա։)

Կ Է Կ Է Լ·

Վա՜յ, դէդի ջան···սիրտս գնում է, թուլանում իմ···(կամաց կամաց թուլանալով վէր է ընկնում գետնին)

Ամէնքը վազում են օգնելու, ոմանք Մելքոյին, ոմանք Նատոյին, ոմանք Կէկէլին. ձէն են տալի· Ջո՜ւր բերէք··քացախ բերէք ···· շնուրովկէն հիտ արէք···

(Վարագոյրը ծածկւում է)

---

(1) Մնաս բարով· մենք շուտ չենք տեսնուիլ...

# ԴԻՎ ԵՐՏԻՍՄԱՆ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ ·

ԳԵՎՈՅ . . . . . *Թիֆլիզեցի վաճառական ·*

ԿԱՏԱՐԻՆԷ . . . . *Նորա կինը ·*

ՆԻՆՈՒՑԻ . . . . *Նորանց դուստրը ·*

ՍՈՓՈՅ · }<br>ՄԱՐԹԱՅ · } . . . *Ծանօթ Նինելու աղջկերք ·*

ՎԱՍԻԼ . . . . *Հարեւան Սոփոյի ·* }<br>ԱԼԷՔՍԱՆԴՐ . . *Հարեւան Մարթայի ·* } *Նինելու տղերք ·*

ՄԱԹՈՍ . . . . . *Ծառայ Գեւոյի ·*

ՀՈՌՈՄ . . . . . *աղախին Գեւոյի :*

*Ուրիշ ջահիլ տղերք :*

# ԴԻՎԵՐՏԻՍՄԱՆ

Թատրոնի բեմը ներկայացնում է բաղ: Մէկ կողմում կատարինէն, Նինուցին, Սոֆոն, Մարթէն և Հռոմը խալիչի վրա նստած կանաչի են ընտրում: Միւս կողմում ազամարդիկը նստած կանաչ տախի վրա քէֆ են անում. մէկի ձեռին դայիրա, միւսի ձեռին թառ. Նրանց առաջը դրած է գինի և նախաճաշիկ: Վարագոյրը բացուելուց երգում են.

Բաղն ենք էկի քէֆ անելու՝ ուտենք, խմենք, խաղ ասենք.
Մեզ բան չի տա բանկասանքը, գլխուհանքս էս գլխենք.
Բաւական է մեզ մեր փիքրը՝ ինչ վուր քաղքումը ունենք.
Էստի քէֆով, խաղ ասելով՝ կախէթու գինի խմենք.

ԳԵՎՈՑ.

(Գինի ածելով ամէնքի համար) Էս էլ խմենք ով ումը կու սիրէ նրա կենացը...

ԱՄԷՆՔԸ.

(Բարձրացնելով թասերը) Մեր սիրեկներու կենացը... ուրա...

ԱԼԷՔՍԱՆԴՐ.

Էկէք ամէնքս մէ մէ խաղ ասենք մեր սիրեկներու կենաց թասի վրա.

ԱՄԷՆՔԸ.

Ասենք, ասենք... ով չասէ երեք ստաքան չորասի խմէ...

ԳԵՎՈՑ.

Լաւ. բաս առաջ Ալէքսանդր ջան, դուն ասա, գլխուհանքս էլ կու քաշենք: (Երգում են.)

Եղբարք. մէկ չուրջ ժողովեցէք,
Բաջ հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակներդ դատարկեցէք
Մեր հայ ազգի կենացը:
Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն
Այս բաժակը դատարկենք:

ԱՄԷՆՔԸ.

Կեցցեն հայոց սիրուն աղջիկերքը. ուրա... (խմում են.)

ԳԵՎՈՑ.

(Լցնելով բաժակները) Վասիլ, քու հիրթն է: (երգում են.)

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:
Ախ, թռիր, ծիծեռնակ. —
Ծնած տեղդ Աշտարակ.
Անդ շինիր քո բոյնը
Հայրենի կտուրի տակ:
Դէհ, սիրուն ծիծեռնակ
Հեռացիր, թռիր արագ,
Դէպի հայոց երկիրը,
Ծնած տեղդ Աշտարակ:

ՀԻՒՐԵՐԻՑ ՄԷԿԸ.

Ջի ընկի վօր էդ ծիծեռնակը մեր սիրեկանիրեմէնն բարաթ բերի մեզ համա . . .

ՎԱՍԻԼ.

Չէ, աղբէր. իմ ծիծեռնակը մօցիքլութին չի գիտի ... էտու համա քաղքի փօշտ կայ...գրէ, ինչ գըրգամ կ՚ուզես:

ԳԵՎՈՑ.

Հիմի իմ հիրթն է (երգում են)
Լցրէք, եղբարք, ձեր բաժակները
Եւ քաջ պարպեցէք. (կրկ)
Այսպէս գինի բոլոր աշխարքումը
Դուք գտնելու չէք:
Ոչ Թուրքի է սա և ոչ Մաճառի,
Ոչ Ֆրանսիայի.
Թող օտարն ուրիշ գինի խմի,
Մերն է հրաշալի:
Շամպանիա գինին կանացի գինի է,
Այն մեր գինին չէ.
Խմել, կոնծել թէ և կարելի է,
Բայց սիրելու չէ:
Խրիմի գինին լաւ գոված գինի է,
Բայց էլի էն չէ.

Ճաշից յետ խմիլ կարելի է,
Բայց երգելու չէ։
  Կախէթու գինին պատուական գինի է,
Թէ և հայոց չէ.
Բայց ափսոս, որ օտարի է,
՝Նոյեան անկած չէ։

Գ Ե Վ Ո Ց.

Ինչ կուզին թող ասին, մեր կախէթու գինուն գինի չի հասնի . . (մոտիկ է տալի երկնքին.) . . . Արեգակը դէմն է գալի. մի կալնենք էստունք, գնանք Քոր ափը։ (ամէնքը վեր են առնում մէկ մէկ բան և գնում են երգելով.)

  Թէ սիրում ես թամաշա,
Պիտես տէսնի քաղքումը
Ինչ են անում համաշա
Տղերքն քաղքի բաղումը։
Հալլ—հալէ, հալլ—հալէ,
Տղերքն քաղքի բաղումը։

Կ Ա Տ Ա Ր Ի Ն Է.

Տէհնում ես ինչ քէփի տղերք են գլխունանքը . . Հօտամ, գնա մի քափը քաշէ. (Հոտամը գնումէ).

Ս Ո Փ Ո Ց.

Էս վունց է էլի, վուր ազէն գլխի նշնելու տղերք է մեծրի . .

Կ Ա Տ Ա Ր Ի Ն Է.

Օչովլի մեծրած չունիմ, հենց իմ Նինուցը ապրի. . Մինք ուզում էինք միղ ու միղ էինք էկի. չիմ գլոխ ծլ է խմաց արի Վասիլին ու Ալէքսանդրին. նրանք էլ իրանց հետ բերիլ են մէկէլ տղերանցը. . իմ Գեվոն էլ խոմ գիտիք ինչպէս կուսիրէ քէփ անիլը. . Առուտէհան ջեր չայը չէինք խմի, մէ բաշ էկան . . . կարուփ Նինուցը, վուր չէր գնացի անցլուխ կապիլ չէր ցից ըլլի ջէհէլ տղերանց առջևը։ Մամթուղ, մէ պատի փէտ մօտ արա, պղնձի տակը դի. . . խծում արի էս խալիչէն թափ տու։

Մ Ա Ր Թ Ա Ց.

Դիփի լաւ տղերք են, մաղրամ գլխունանց վրա լաւ քէփ անողը Ալեքսանդրն է. . . տեհնում իք ինչ խաղիր գլուխ . .

ՍՈՓՈՅ.

Վանիչը լաւ խաղը չի գիտի, մաղրամ սիրուն է ու խօսա լաւ բէնէր ունի. ամէնում իք ինչ խապտի է հաքնում...

ՆԻՆՈՒՑԻ.

Դուք վուր դրանց համա մեռնում իք, տեսնինք դրանք էլ ձիզ հաւանում ին... Մէզափուլ չուզին ձիզ ձիր հարուր թումնիրովը...

ՄԱՐԹԱՅ.

Ընչի չին հանի.. ինձ համա ներուէլ մօդիքուլէր դր՚ի Ալեքսան դրէն, իմ մամէն չէրխա.. իս ջեր մարդ չիմ ուզի... ինչիմ չտապում.. ջեր խոմ չիմ պառուի... 16 տարեկանիմ...

ԿԱՏԱՐԻՆԷ.

Վո՞նց չէ... էրեխայ իս. մղու... մասխ չըկծխ... 16 էլ կուլիս, ու 20 էլ... Նինուցան ջեր ծծխ ունէի, վուր քու գէզէն քու գլուխը կալից.

ՍՈՓՈՅ.

Թէ ուզենամ, էգուց էլէտ վանկի հէտ կունչնուիմ.. Մաղրամ իմ մամէն ջեր բանի է մնում...

ԿԱՏԱՐԻՆԷ.

Լաւ է, լաւ է, շատ մի փքի.. հիմի վունց սիրունութիւնին իս մտիկ տալի, վունց տարիքին... փող ին ուզում, փող...

ՄԱՐԹԱՅ.

Գանա մինք անփող ինք...

ԿԱՏԱՐԻՆԷ.

Անփող ընչի կուլէք.. ով է ասում... ասղամ հազար թումնով դրանց պէս տղերքը չին ուզի.. Հաղի իմ Նինուցը էստի էրկու հարուր թումնով նստած չէ՞... դրան թողած, ձիզ ընչի կուզին...

ՍՈՓՈՅ.

Օչով չի գիտի, ով մարդու կէնայ, ով տանը կումնայ...
(Ծառան գալիս է, ամէնքը վէր են կենում. ծառան հաւաքում է խալիչէն և սկսում է թափ տալ.. միջինը մէկ թեփշի է վէր ընկնում և կոտրում է.. ծառան մնում է սառած...)

ԿԱՏԱՐԻՆԷ.

Քօռանաս ու կուրանաս դուն, մը՛թալ.. հոգիս քու լաչաթրիան ըը Լոխը... փչանալու, քանի կտորխ ուլիթխ... քու ձինքը կտրաւի.

գնա կորի, դուս տար էդ խալխչէն․․ (կանանչին ձեռքին բռնած դուրս է գնում սուլով) պախսիս դուն, մաթուղ, պախսիս․․․

ՆԻՆՈՒՑԻ․

գնանք Քռի վրա, էրէխներիս ջուր խմինք․․ խիստ շուքէ․․

ՍՈՓՈՑ․

Իժում սիպտակացիդ ունիս․․

ՆԻՆՈՒՑԻ․

վօնց չէ․․զրմզացիդ էլ ունիմ, հալիսյ էլ իմ բերի, լաւ թ ազարիքով իմ էկի․․․

(Կուռը կաան դցած փոքր ինչ ման են գալի երգելով)

Միր տան էղնէն բաղչայ կայ, ջան գիւլ․

Բաղչի միջին ռեհան կայ, ջան․․

Ռեհանը քաղող պխտի, ջան․․․

Ծօցումդ խաղող պխտի, ջան․․

(Դուրս են վազում, իրալու ասելով քու ծօցումը, քու ծօցումը խաղող պխտի․․

փոքր ժամանակից յետոյ գալիս է Մարթէն երեսը սրբելով, ձեռին բռնած էրէս չինելու նարազը ։

ՄԱՐԹԱՑ․

Մէ ուրդ էլ չիմ ճարում, վուր էրէսս չինիմ․․օթախումը բազմիչիքն են նստած․․․էսաի լաւ կուլէր, մազրամ վայ թէ ամքին գայ տէհնի․․․ախ, աստուծ ջան, ուր գնամ․․․Մուլափ, կէհամ չարխերի կուռը․․․ օղընգա Ալեքսանդրը չըտէհնի․․․ (գնում է)

ԱԼԵՔՍԱՆԴՐ․

(ներս մտնելով) Իսամ էլ չէ․․․էս ուր է կորի․․․լաւ աղջիկ է, ափսոս վուր փուղը քիչ է․․․ ինչ սիրուն աչքիր ունէ․․մաչ թշիրը, թշիրը․․ հենց գլուխս խինձորնիրին․․․ինչ նամազուլ է անում ղալիլը, թէ քումէ․․․վօնց չէ․․իրա Սոփոն է ծնփում, քռացիլ է, չէ ուէհնում․․ Սաղ էլ կուզայ իմ Մարթէին․․․Մազրամ, մուլափ, սափրի վրա լաւ կոտանդլիմ իրիքին էվէս․․․(գնում է)

ՍՈՓՈՑ․

(Ներս մտնելով) Մարթա, Մարթա,․․կարուսս դուն․․․Վիր է կալի էրեսի նարազը ուկորել է․․էլ չի ասում, թէ իս էլ կուզիմ․․ Հիմի կէհայ կուծեփէ էրէսը,ու Ալեքսանդրի ղէմուղէմը ցից կուղի․․․հօսղիմ դրա ըը-

պատած գլուխը... (հիգ է մախկ տալի) Քու դուշմանը, վախը գալու է, ես Ջէր երէսս չեմ չինի... քուամայ Մարթէն, աէհար ինչ էրի իմ գլուխը... Թէկէս հալի ինձ ածէնի էն ողէն, հիգ կուկանգնի, տանս կուքանդուի..

(փախչումէ)

## Վ Ա Ս Ի Լ.

(Ներս մանելով) Ձեմ գիտի, խաչը, վերը ջոկեմ.. Սոփոն սիրտն է՝ փողը քիչ է.. Նենուցու փողը չատ է՝ ինքը սև ոփող է. (մտածում է) իմ հէսաբումը փողը լաւ բան է, աղբեր, գիրի կուծածկէ.. Սիրունութինին թամահ անեմ, քիչ փողով տանեմ, իժում վայ թէ սիրունութինն էլ անց կենայ, փողն էլ խարջուի.. ինչ քարը տամ իմ գլուխը... Աղբէր... աբսալն լաւ բան է. (գնում է).

## Ն Ի Ն Ո Ւ Ց Ի.

(Ներս մանելով) Տէհնումես ինչթաւուր սրտիս ին. սարկլէս երէսի խարսղը, ու ջաւն ու ջրհանգամն էն կտրի.. սաա վուրդի դատն... հետի տրդէլի թաքցրի, վուր օմքեն չրաէհնի.. իժում, ով գիտէ ենդադամ կուծախեն երէսնիրը, վուր ինձ համա բան չեն թողնի.. Ախմախ ադէրք, վուր դրանցն էն հաւնի.. ուչ.էր չուն էն անիծածնիրը.. Նետայի գիտենամ, թէ ինչն էն հաւնում... Արա վուրդի Աստուծ կայ, Սոփոն վախլի լայլղ աղջիկ է... վունց բոյ ունէ, վունց չնուրք.. ախր ինչ որ վուր է.. իս վարաւուրդ իմ անում, վուր Վասիլն էլ երկու մարդ է. թէկիմ մամլըն մէ պարի փողը ունեցնէ, նա ինձ կուզէ.. Ախ, ինչ լաւ կուլէր, վուր Սոփոյին թողնէր, ու ինձ ուզէր..կէհամ գնդլիս կօխեմ, վուր իմ մամլըն կտրէ.. (դուրս է գնում)

(փոքր միջոցից յետոյ Գեվոն և միւս ադէրքը լաւ քէփով դալիս են երգելով)

Քանի ու քանի տանեմ
Վարդ մի սիրեր, փուչ ունի.
Գնա մանիշակ սիրէ,
Փուչ չունի, անուշ հոտ ունի։
Վարդը բացուած մի սիրեր,
Որ գայ ի ծոցդ թառմի.
Վարդը բուլբուլիկ սիրէ,
Որ գայ ի ծոցդ բացուի։

## Գ Ե Վ Ո Ց.

Խիստ դրուստ է ասում.. ես էլ իմ պատաւսխանն կա վէր ջէնէլ վարդ է ի

ունեցի...

(Կատարինէն և միւս աղջկերքը գայիրէն կամաց խըսելով թառըմն և բամի ե-տևից երգում են.)

Գեղջկական աղջիկ եմ ես գանդիւղացէն,
Եկեալ եմ աստ զամբիւղովք ի Հայոց երկրէն.
Ցուցամ, զի հայ տիկնայք, և պարմանայք Հնդկաց,
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց։

(Նէրս մտնելով) Առ զամբիւղ, առ զամբիւղ, առ զամբիւղ, յօտար աղ-ջկանէս։

ԳԵՎՈՑ·

Էս լաւ քէփումն ենք.. ամէ՜ լսի վար քաղքի աղջիկերքը հայէվար խաղ ասին..

ԿԱՏԱՐԻՆԷ·

Բաս դուք հէնց գիտիք, թէ մէնակ ազերքը գիտին հայէվար խա-ղէր... հիմիկուայ աղջիկերքը հնարի խելօքացել են, վար գիտի հայէվար խաղերին ասում.. ափսոս չեն մէր հայու խաղերը...

ԱՄԷՆՔԸ·

Էգ լաւ բան է էլի... ապրին էդ Թաւուր աղջիկերքը.. ուրա

ԿԱՏԱՐԻՆԷ·

Արա ակընջմիմ կառավարութենն էլ կուհանենք.. իս սաւիրէն գը-ցել իմ ամի քօի ափը չօրեսրի մօտ թթան ծառի տակը..

ԱՄԷՆՔԸ·

Ուֆ, էդ ենչ լաւ տեղ իս ջոկի.. ապրէ մէր տանտիկէ՛նը.. ուրա

ԳԵՎՈՑ·

Քու լաւ տանտիկնութիւնը էնդաց կուէրևայ, թէ վար լաւ ճաշ էլ ունենաս.. արա, ասա ակընջիմ, ենչ իս հազիր արի..

ԿԱՏԱՐԻՆԷ·

Լաւ դօշ, խինկլալայ, պանիր, լաւ պաստալայ, մածնով բօրանի, լաւ սակիք խորված, սաւը գինի.. ուրիշ ենչ պիտի...

ԱՄԷՆՔԸ·

Շատ լաւն, չատ լաւն է.

### Գ Ե Վ Ո Ց ·

Բաղմինչոնն_աաա , երեք վառեկ էլ ճարէ . ինչկի էստնք կուտինք , էն էլ կուտապակուի . .

( Ձեռքը ճմռելով ) Է . . չումքի էսէնց է , էկէք տղերք մէ խաղ էլ ասինք էստի , ուզ՚անք հաց ուտելու .

### Մ Է Կ Հ Ի Ւ Ր ·

Վ՚որ խաղը ասինք . .

### Վ Ա Ս Ի Լ ·

« Աստուծոս զինացիր » .

### Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր ·

Չէ , էդ էրկար է . սուփրամը կօփինք . .

### Մ Ի Ւ Ս Հ Ի Ւ Ր ·

« Երկու ձեռքին երկու մոմ » .

### Ե Ր Ր Ո Ր Դ Հ Ի Ւ Ր ·

Չէ , էդ էլ կէնաց սուփրի համա , խիստ էրկար է , գլխունմնքս էլ քախցած ինք . . Մէ կարճ խէքին ասինք .

### Գ Ե Վ Ո Ց ·

Էկէք , տղերք , էն Նոր խաղը ասինք , վոր Թիֆլիզու հաւոց թէատրի համա է գրած . . .

### Ա Մ Է Ն Ք Ը ·

Լաւ կուլի , լաւ կուլի , էդ ասինք .

( Երգում են )

Թատրոնիս վերջին խնդրենք՝ ամէլ պակաս թողութիւն .
Ներողամիտ գտնուէք , տուէք մեզ լաւ ուղղութիւն .
Մեր Թատրոնը պահեցէք՝ սա է Հայոց բերկրութիւն .
Գնանք բարով , մնաք բարով մինչ ի կրկին տեսութիւն : ( կրկնել )

( Վարագոյրը ծածկւում է ) :

2013